Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Դ. — ՇՐՋԱՆ ԺԸ. 1885 ՏԱՐԻ ԺԷ. ԱՊՐԻԼ 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ ԽՕՍՔԻ ՄԷՋ.

(ԿՈՂՈՍ. 4. 6).

Ամենայն բան, ինչ որ մոռաճումես, մի խօսիր. մեծ մասը քեզ համար պահիր, ինչու որ, նետը, որ միանգամ ձգուեց, այլ և այս երբէք իւր ընթացքից չի՛ խոտորիլ: Բայց երբոր պարտաւոր ես խօսել, պինդ ու հաստատ կանգնիր իբրև տղամարդ: Ծառն՝ իւր պտուղներովը կը գատեն, մարդուն՝ իւր խօսքերովը:

—

Խօսքերն էլ գործեր են. իմ խօսքերիս համար նոյնպէս հաշիւ պիտի տամ սրտերը քննող Դատաւորին, ինչպէս որ իմ ամեն գործերիս համար արդար դատաւորին հաշիւ պիտի տամ: Խօսքերն էլ գործեր են: Խօսքով աշխարհի մէջ մեծ ու նշանաւոր բաներ ենք անում. յառաջացնում ենք շատ ու շատ բարի գործեր, ու շատ անգամ պատճառում ենք մեծամեծ չարիք: Ո՛չ հարստութիւնն, ոչ ծագումն և ոչ քաղաքական նշանաւոր դիրքն, այլ խօսքն է մարդուս մեծ զօրութիւնն ու կարողութիւնն, որով նա գործում է: Ոչ

թէ թուրն, այլ խօսքն է շատ ամուր և զօրաւոր զէնքն, որով մենք կարող ենք վիրաւորել, պաշտպանուիլ կամ պաշտպանել։

Մեր խօսքը բալասան է, որ մենք երբեմն ամբոխ ու թեթեւամտութիւն տուող դեղ լցնումենք ցաւած սրտի վերայ. բայց խօսքը մահաբոյն էլ է, որով մենք ամբողջ մի ընտանիքի անվրդով բարօրութիւնը խանգարումենք։ Խօսքով է, որ մենք ինքն իրան կորցրած կամ յուսահատուած մարդուն սիրտ ենք տալիս, ընկած տեղից վեր հանում՝ ու հպարտին այնպէս կոտորումենք, որ ընկնումէ։ Լեզուն է, որ թշնամութիւն է սերմանում և նոր բարեկամներ ձեռք բերում։ Լեզուն ամենայն բան իրար հետ կապող կապն է, որ մարդկային ընկերութիւնն իրար հետ միութեան մէջ է պահում։ Խօսքով՝ վիշտը ամոքվումէ, հոգսը վարատվում, ուրախութիւն աւետվում, սուրբ ջերմեռանդութիւն աւելանում. — բայց և խօսքով է բարկութիւն շարժվում, անմեղութիւնը ճամբից հանվում, չարութիւնը այժ տոանում առաջանալու, ճշմարտութիւնը ոչնչանում, աշխարհի վերայ դժոխք շինվում։

Եթէ իմաստուն մարդու համար իւր կենաց մինչև անգամ չնչին մի գործն էլ իւր ուշադրութեան արժանի պիտի երևի, եթէ նա մինչև անգամ մի ամենաւոքը գործ անելու ժամանակը պիտի կշռի առաջ և ասի իրան թէ՝ քեզ վայելուչ է — ուրեմն որքան կշիռ պէտք է ունենայ նորա առաջ խօսքը, որ իւր կենաց ամենօրեայ գործն է։ — Խօսքն եմ ասում, որով պիտի իմանան մարդիկ իրանց մտածողութեան կերպն և որով պիտի յայտնուի իրանց սրտի արժանաւորութիւնն, կամ ցածութիւնն ու անպիտանութիւնն։

Երբ որ ես խելքի տակ եմ գալում ու մէկ մէկ միտք եմ անում այն ամեն բանը, ինչ որ ես, իմ մտքերս յայտնելով, բարի կամ չար բան առաջացնելու պատճառ պիտի լինիմ, պէտք է ամաչեմ թեթեւամտութիւնից, որով շատ անգամ իմ հրամաններս եմ տուել, իմ ցանկութիւններս յայտնել, իմ կարծիքներս լսացրել, կամ գատողութիւններս տուել։

Ցեղունում եւ Հասկանում, որ այդ ժամանակ շատ անգամ իմ ամենայն կշիռս ու պատիւս կորցրել եմ, որոնց ետևիցն եմ ընկնում. տեսնումեմ, որ ինքս եմ մեղաւոր, որ իմ ունեցած մեծ պատիւս շատ պակասել է իմ ծանօթներիս, քաղաքակիցներիս առաջ. մինչև անգամ այն պատիւը չունիմ իմ աղգականացս մէջ, որ շատ ցանկալի էր ինձ ունենալ։ Իմ լեզուս շատ քիչ անգամ

խաղաղ սրտիս և ընտրող ու զգուշաւոր մտքիս գործքն էր, ինչպէս ալ ես կըցանկայի լինէր միշտ. այլ ուրիշ շատ անգամ գործքեր էր իմ վրդոված սրտիս բարկութեանն, իմ չարախնդայութեանս հակմանը, իմ անխնայասրտութեանս ձգտմանը, իմ պարապուրիշի ցանկութեանցս, իմ իշխանասիրութեանս, իմ շահասիրութեանս։

Ի՞նչպէս. կարծել եմ ես Աստուծոյ առաջին պատասխան տալ, որին յայտնի են իմ ամեն մտածմունքներս։ Ինչպէս հանդիսաւոր կերպով ասաց երբեմն Փրկիչն այս յորդորական խօսքը. «Աստմեմ ձեզ, որ մարդիկ պէտք է համար տան ամեն մի դատարկ խօսքի համար, որ իրանց բերանից հանել են. քո խօսքերովդ կարդարանաս, քո խօսքերովդ կըպարտաւորուիս»։

Ուրեմն ինչ որ անուամբ խօսքով կամ գործով՝ այն ամեն բանը Փրկչի անունովն արէք. այնպէս արէք՝ ինչպէս ինքն Յիսուս կանէր, երբ որ նա ձեր տեղը, ձեր հանգամանաց մէջը գործելիս լինէր։

Եւ մի՛թէ այնքան դժուար է այս մեծակշիռ պարտաւորութիւնը,—այն պարտաւորութիւնը, որոյ կատարման համար պատիւ եմ ստանում Աստուծոյ և մարդկան առաջը, իբրև հաստուցումն ու վարձատրութիւն։

Մի՛թէ դժուար է իմ լեզուս սանձած պահել, որ իմ բանակատնութեանս ամենամեզմ ակնարկութեանը հնազանդումէ։ — Թէև մի քանի անգամ արդէն ամեն բան կարողացել եմ իմ վերայ անել. որչափ շատ անգամ արդէն իմ խօսակցութեանցս ու դատողութեանցս մէջ շատ զգուշաւոր եմ գտնուել՝ որ մի վատանգ հեռացնեմ, կամ մի օգուտ ձեռք բերեմ։ Մարդոց շրթունքից դուրս եկած խօսքը դատարկ շունչ չէ, որ երբ որ դուրս եկաւ ու օդում ցնդեց, մոռացուի. նա մի նետ է սլաքաւոր, որ սրտի մէջ մտնումէ ու մնում։

Ո՞րքա՞ն խօսքէ մէջ խոհեմութեանը Քրիստոսի ճշմարիտ աշակերտի մեծակշիռ յատկութիւններից մէկին է։ Այս խոհեմութիւնը ձեռք է բերվում իւր վերայ ունեցած մշտական ուշադրութեամբ, ու միշտ գործ դնելով, վերջապէս սովորութիւն է դառնում և վարձատրումէ մեզ նորանով, որ մենք սրտով ինքներս մեղանից գոհ ենք լինում, այն միևնոյն անգամ մեզ պահպանումէ ու պաշտպանումէ հազար տեսակ դժգոհութիւններից ու անախորժութիւններից,

որոց պատահումենք ուրիշ անգամ մեր թեթեւամտութիւնովն ու անմտածողութիւնից։

Բանականութեան այս արթուն հսկողութիւնը նորանում է, որ իւր գաղտղութիւնների, կարծիքների և ցանկութիւնների մէջ ոչ մի գրգռուած կրքից, որպէս և հաճոյական կամ անհաճոյ բանի սաստկութիւնից չէ տարվում։ Այս այն աստուածային անվրդով հոգւոյ դրութիւնն է, որ Քրիստոս իւր կենաց ամեն րոպէների մէջ ցոյց տուեց։

Անկարելի է ենթադրել խօսքի մէջ խոհեմութիւն, երբ որ բանական հոգին իշխանութիւն չունի իւր վերայ, իւր հոլեղէն բնութեան վերայ, իւր զգացմանց վերայ, որ իւր մարմնոյ զաւակներն են, իւր արեան և իւր գրգռուող ջղերի ներգործութիւնն են։ Թէ և բանական հոգին բարկութեան բորբոքուող ալիքը չէ կարող արգելել, բայց երբ որ արիւնը ալեկոծվում է, պէտք է իրան բռնի, որ հեշտ բան չէ, չայլայլի, չշփոթուի, «Ո՞վ գոլեմ յԵրուսաղէմ։ Նա պիտի համբերի հաստատ կամքով՝ մինչև իւր հանգստութիւնը գտնի և այնուհետև որոշի՝ թէ ինչ պիտի անի։ Անմաքուր ցանկութիւններ կարող են զարթնել մարդուս մէջ. բայց Քրիստոսի աշակերտը նոցա գերին չէ։ Նա ոչ մի որոշում չէ անում, քանի որ այդ ցանկութիւնները նորանում կատարվի դրութեան մէջ են. նա նորանց ոչնչացնումէ իւր կամքի հաստատութիւնով՝ մինչև որ նա ինքն իւր իշխանութեան տէրն է դառնում և այն ժամանակ նա անում է այն որոշումն, որ պէտք է։ Մի նշանաւոր շահեցողութեան հրապոյրը կարող է մի րոպէ նորա պատուոյ զգացման վերայ ընկճող կերպով ներգործել, բայց խմաստունը չէ թողնում իրան ճնշուիլ այն հրապոյրովն ու ակամայ մի ծուռ գործ անել։ Նա չէ թողնում իւր բերանից խօսք դուրս գայ, իւր ձեռքը մի գործի կպչի, մինչև որ իւր սպարտականութիւնը լաւ կշռի և իւր մէջը պարզ կերպով հասկանայ, թէ արդեօք իւր գործ դնելու միջոցներն, որոնցով ինքն նպատակի պիտի հասնի, յարգելի՞ են։

Մշտապէս մեզ կրթելը՝ մտածելով բան անելու և մտածելով խօսելու՝ մեզ համար երկրորդ բնութիւն է դառնում։ Եւ ահա սորա եռանիւն է, որ մենք պէտք է ընկնենք, այդ կրթութեանը պիտի մենք ձգտենք միշտ լրիւ. Աստուծոյ որդիք։ Մինչև անգամ «Հայր մեր» մեր հոգւոյ «վերջ» պիտի դառնան,

այն ժամանակ մոռեցնում ենք մենք «չը»-ը։ Առաքինությունն էլ այն տեղ է տեսնվում միայն, երբ որ հոգին իւր մէջը մեղսակոծ կամքի դէմ պատերազմում է ու յաղթում։ Բայց այնտեղ, ուր որ մաքուր կամքը տէր դարձաւ, այնպէս որ մեզ այնուհետև դժուար կըլինեը ուրիշ կերպ գործել, այն ժամանակ հոգւոյ սրբութիւնը ձեռք բերինք։ «Ով որ ոչ մի խօսքով չի սխալուիլ, նա է կատարեալ մարդը»։

Եթէ քեզ համար մեծ կշիռ ու նշանակութիւն ունի հասնելն քո կատարելութեան այն աստիճանին, որ դու Աստուծոյ արարածոց մէջ ամենաանարգ ստեղծուածների մէկը չըմնաս,— եթէ քեզ համար կշիռ ունի, որ դու հոգւոյ այն վսեմ արքունութեանը ձգտիս, որով դու միշտ կարող կըլինիս քո վերայ և քո լաւագոյն կամաց վերայ իշխող մնալ, «—չէ՞ ամեն պէղ խօսէ՛ը «չէ՞»։

Ով որ միշտ «չէ՞»-ով և «չէ՞»-ն է խօսում իւր նման մարդոց հետ, նա առաքինութեան լաւագոյն ճանապարհի մէջն է։ Նա իրան չի թոյլնիլ, որ կրքից տարուի ու մատնիչ դառնայ իւր մերձաւորի ուրախութեանը, հանգստութեանը, բարօրութեանն, ապահովութեանն ու պատուոյն։ Ինչպէս որ սէրը բոլոր քրիստոնէական կրօնի միջուկն է, նոյնպէս է միանգամայն իսկական քրիստոնէի ամենայն դատողութեանց, կարծեաց, և խօսակցութեան հիմն։ Այն բերանը, որ սովորել է միայն օրհնել, չի կամենալ իւր հակառակորդի դէմ նզովք հանել։ այն բերանն, որ ուզում է միայն օգտակարը յաջողեցնել ու յառաջացնել, ուրախութիւն տարածելու օգնել, ցաւ, վիշտ քաշողներին մխիթարել ու հոգսերի, մուտանջութիւնների մէջ ընկածներին բարի ճանապարհը ցոյց տալու իւր խորհուրդներովն, այն բերանը չի բացուիլ, որ ընտանիքների վերայ զրպարտութիւններ թափի, երկպառակութիւններ գցի, պատուաւոր և բարեխիղճ մարդոց խարի։ Ով որ մերթ և սիրով է խօսում, իւր մերձաւորի դէմ, ոչ մի վատ բան չի ասիլ։ Միշտ մի հաստատ ու անկասկած նշան է՝ մի մարդու ճշմարտապէս բարի լինելուն՝ երբ որ տեսնում ենք, որ նա ուրիշների վերայ խիստ դատողութիւն չէ տալի, այլ ամոք և մեղմ կերպով է խօսում. բայց նա, որոյ լեզուն ամեն մի դիպուածում ասելի բաներ է թափեփնում անխնայ, աւելի ինքն իրան է ամօթ ու նախատինք բերում, քան թէ այն եղբօրն, որի վերայ չարախօսում է։ «Ձեր խօսքը», այսպէս է ասում Սուրբ Գիրքը, «միշտ սիրով ու աղով համեմած

լինի, որ իմանաք թէ՝ ինչպէս պէտք է ամեն մի մարդու պատասխան տալ»։

Մարդուն ճանաչումես իր խօսքերից, որ թափանցիկ, բարակ քօղի նման են, որոց մէջ քեզ լաւ երևումէ նորա հոգին. իր խօսքերին մխիկ տալով, նորա վերայ դատողութիւն ես անում ու հասկանում ես, թէ ինչ մարդ է. ու իր բերնից դուրս եկած խօսքերովն նա քեզ գրաւումէ. կոշտ ու կոպիտ խօսքերը ցոյց են տալիս, որ բերնից հանող մարդու հոգին ևս կոշտ ու անտաշ է. որ պակասաւոր է նորա կրթութիւնը, որովհետև վայելչ ու անվնաս խելը չգիտէ. ամօթ, պատկառանք, պատիւ իր համար անծանօթ բան է. մտքին ու բերնին եկածը դուրս է տալի, առանց կշռելու. իր համար ազնիւ կանոնների հիմն ու գաղափար չունի. քնքոյշ զգացման համար ինչ է տանելի կամ անտանելի, նորան անյայտ է, նորա համար միևնոյն է ու տարբերութիւն չունի։ Արդ՝ ինչպէս որ դու ուրիշների վերայ դատողութիւն ես անում ու մտքիդ որոշումը տալիս, նորանք ևս քո իսկ խօսքերովդ քեզ կդատեն։ Քո խօսակցութիւններիդ մէջն ինքդ ես տալի նորանց ձեռքն այն չափն, որով պիտի չափեն քո արժանաւորութիւնդ ու անարժանութիւնդ։ Եթէ որ քո խօսքերիդ մէջ ուրիշների դէմ սէր, բարեկամութիւն, խիղճ, արդարութիւն, չափաւորութիւն, խնայողութիւն չկայ, ինչպէս կարող ես կարծել, որ ուրիշները՝ քեզ դատած ժամանակը՝ բարեկամաբար՝ կամ արդարութեամբ դատեն։ Եթէ որ դու քո խօսակցութեանդիդ մէջ անվայել բառեր ես բերանիդ հանում, ինչպէս կարող ես պահանջել, որ քեզանից աւելի լաւ մարդիկը քիչ պատուեն։ Եթէ որ դու քո արած դիտողութիւնների, նկատողութիւնների մէջ ամենևին աչ ու ձախը չես մխիկ տալիս, մճռաբար ասումես ասելիքդ, սուր դանակով կտրում՝ պրծնում, քեզ վերայ մեծ կարծիք ունենալով իբրև կատարեալ ու անսխալական ոմն, ինչպէս կարող ես դու հաւատալ, որ քեզ նման մարդիկ սրտով կլսեն քեզ։ — Մարդիկը քեզ համար միշտ այն են, ինչ որ դու ես նորանց համար։

Մարդոց հետ ոչնչ ճշմարիտ խօսիր ու անկեղծ պրպուռ։ Սուտ ասելով, սուտը խօսելով, քո քաղաքացիներիդ ձեռքին անուղիղ չափ մի տալ քո արժէքդ չափելու։ Աւելի է մարդու խօսքերի մէջ խորամանկ զգուշաւորութիւնը, որով նպատակն է ուրիշներին խաբել ու այնպիսի զգացումներ կեղծել, որ իւր մէջը չկայ։

Կեղծաւորի հոգին մի մշտական չարագործ է, որ, լոյսից վախենալով, իրան խաւար խոր փոսերումն է ծածկում, որ չգտնեն. միշտ քօղով ծածկուելու է կարօտում, որ ուրիշների աչքից չընկնի, աւելի չդառնայ: Ու այդպիսի ողորմելի մարդն ի՞նչ չարգանք պիտի ունենայ դէպի ինքն, որ չէ կարող համարձակուիլ առանց ծածկուելու այնպէս յայտնի երևել ուրիշների առաջն, ինչպէս որ է: Ի՞նչպէս կարող է նա գոհ լինել իրանից, երբ որ իւր ծածուկ պահած ցածութեանը պատճառով միշտ պիտի զոլոյ աշխարհի աչքը իրան ու իւր անարգ գործերը տեսնելուց, խմանալուց:

Շատ մարդիկ խելօքութիւն են համարում իւրեանց խօսքերի մէջ աւելի քաղցր, աւելի պատուաւոր, աւելի սիրելի, աւելի բարի կամեցող, աւելի բարեսէր, աւելի մեծահոգի, աւելի համբերող ու տանող երևելու, քան թէ իսկապէս են. բայց այսպիսի խելօքութիւնն ամէն ժամանակ դէպ ի խորխորատներ է տարել: Նուա՝ թէ ուշ՝ ցած է ընկնում ամենախորամանկ խաբեբայի երեսից իրան աւելի սիրուն ցոյց տուող դիմակն՝ ու մարդ տարտափումէ մի սիրելի մի հաճելի երևեցող կերպարանքից, որոյ եռևէ ինքնասիրութիւն ու նենգաւոր խորամանկութիւնն էին դարան մտած. այսպիսի մարդու մի ժպիտն անգամ մեզ վտանգաւոր է երևում, որովհետև այդ ժպիտի տակը ծածկած չարութիւն կայ:

Ոչ մի խելօքութիւն չկայ, որ կեանքի ամենայն հանգամանաց մէջ աւելի հաստատ ճանաչուած լինի, քան թէ անխարդախ ու պարզ բնաւորութիւնն: Աշխարհը միայն նորան է հաւատում, որին որ ճանաչումէ, նորան է մարդս իւր սրտինը հաւատում, ոչ որ իւր սիրան աղատ ու ազնիւ կարող է ցոյց տալ անկեղծաբար. բայց խորամանկ մարդուն դէմ խորամանկութիւն ու անհաւատարմութիւն են գործ դնում: Նա, կարելի է ասել, իւր խաղը դեռ և չսկսած, արդէն շատ բաժինը կորցրել է, տանել է տուել:

Ուրեմն ֆելօ-ն-ը ֆօ մէջ՝ այն կեղծ ու մեղմեխ կերպարանք ու վարմունք ունենալը չէ, որով մեք մեղ աւելի ենք խայտառակում, ինչու որ այնքան անպատիւ լինելու մարդիկ չէինք կարծես, այդ խաբեբայութիւնն, որ անում ենք աշխարհի մէջ ու ստան՝ նորան խաբում, այդ խոկ մեր խաբեբայութիւնովն մեք մեղ խոկ չարաչար կերպով ենք խաբում ու դարս ցաւն մեր սրտին ամենատատասիկ կերպով է ներգործում: Խօսքի մէջ խոհեմութիւն

ունենալն այն է, որ մենք ակն յայտնի կերպով ցոյց տուած լինինք մեր արած դատողութիւնների մէջ չափ ու սահման պահելներս իսկական խղճի ու կարեկցութեան հետ միասին, որ բոլորովին անխնայ ու անխիղճ կերպով վարուած չլինինք այն տեղ, ուր որ ամեն վարմունքը վնաս չի բերիլ· առանց մտածելու և կշռելու բանի դրութիւնն ու հետևանքը, պարզութիւնով ու բացաբերանութիւնով խօսելուց զգոյշ մնանք, ուր որ վնաս պիտի յառաջանայ, տեղին ու ժամանակին խօսենք, որ մեր խօսքերը մարդոց կամ օգուտը առաջ բերեն, կամ գալու վնասին առաջն առնեն։ Բայց աւելի շատ անգամ և՛ ճշմարիտ խելօքութիւնը խօսքի մէջ նորանումն է, որ մարդ գիտենայ տեղին ու ժամանակին լռել։

Որչափ որ ճշմարտասիրութիւնը քրիստոնէի զարդն է, նոյն չափ և՛ նորա անունը կտրտում ու իւր պատուից ձգում նորա ծայրայեղ նախանձախնդրութիւնը ճշմարտութեան համար, կամ ճշմարտամոլութիւնն, որպէս և ասելն՝ առանց պահելու և առանց աչ ու ձախ նայելու՝ այն ամեն բանն՝ լինչ որ գիտէ, ու մտածում է, ճշմարտութիւնը մի անեղծելի սրբութիւն է, մի աղնիւ ծաղիկ է, որոյ քնքոյշ ու գեղեցիկ բաղադրութիւնը կոշտ ձեռքով բռնողից շուտ աւերվում է։ Այնտեղ պէտք է ճշմարտութիւնը խօսել միայն, ուր որ խօսքի նպատակը արդարութիւն ու խաղաղութիւնը պիտի լինի։ Բայց իսկոյն այդ ճշմարիտ խօսքի տեղ պէտք է բանի լռութիւնը՝ երբոր խօսելով վնաս պիտի յառաջանայ, ուր որ ընտանիքների կամ մասնաւոր մարդոց հանգստութիւնը զուր տեղը պէտք է կորչի· այնտեղ և՛ սպառնականութիւն է խօսք բերնից չըհանել, ուր որ մեր խօսելը մեր արժանաւորութիւնը պէտք է ստորացնի։ Երբ որ Յիսուս Հրէից մեծ ատենի առաջը կանգնած էր և իւր վերայ ամեն կողմից ու շատ բերաններից զրպարտութեան խօսքեր էր, որ իւր դէմը կը տեղային, ասում է Սուրբ Գիրքը՝ նա լուռ էր, ամենևին չէր խօսում։ Նորա լռելը այսպիսի րոպէի մէջ՝ իւր անմեղութեան ամեն ճշմարտախօս վկայութիւնն էր։ Բայց երբոր նորան քահանայապետը վերջապէս ստիպեց խոստովանել իւր առաքման մասին իբրև Մեսիա, այն ժամանակն ասաց նա արձակ համարձակ՝ ես եմ։ Թէ և իւր բերնից հանած այս խօսքը նորան մատնեց չըփրկուելու և ամենաչարաչար մահուան։

Կեանքի ամեն մի դրութեան մէջ՝ մեր անելիքը սորվեցնում է մեզ մեր քրիստոնէական զգացմունքը։ Մի բան մարդուս համար ան-

համեմատ կերպով աւելի դիւրին է, այսինքն է՝ խելօք կերպով մի գործ անել, քան թէ խմաստուն և ազնիւ կերպով։ Մեր անելու գործի մէջ խելօք կերպով շարժելու ատիպումէ մեզ աշխարհքս ու նորա մէջ մեր արած ամենօրեայ փորձը. բայց խմաստուն և ազնիւ լինելու համար այդ ճանապարհը չէ, այլ այն, որ տանումէ մեր հայեցուածքը դէպի Աստուած և յաւիտենականութիւն։ Ամենից խմաստունը միայն նա է, որոյ խելօքութիւնն ամենապատգաբերն է սրտի համար։ Բայց թէ մեր խմաստութիւնն և թէ խելօքութիւնը ցոյց ենք տալի մենք միայն ԽՈՀԵՄՆԻՆ։ Խօսքերն էլ գործեր են, որ Աստուած է դատում. սորա համար այն միայն խօսինք, ինչ որ օգտակարն է, ինչ որ մեզ նման մարդոց վերայ այն ներգործութիւնն է ունենում, որ նորանք ուղղվումեն ու լաւանում, ուր որ խօսելու տեղն է անպատճառ և ախորժ է ականջների համար լսելու։

Ո՛վ Աստուած, այն բերանն, որ քեզ փառաբանումէ ու պաշտում, այն բերանն, որ երկիւղի ժամերումը հառաչանքով քեզանից օգնութիւն է խնդրում,—այդ բերանն իրան երբէք չպղծի անմաքուր խօսքերով, երբէք չպղծի իրան՝ չարախնդաց ծաղրածութեան խօսքերով, ղրպարտիչ ատելութիւնով արած անգութ դատաստանով մեզ նման մարդոց մէջ տկարներուն վերայ։

Ո՛վ ամենասուրբ էութիւն, ինձ և ես արժանի՞ արա սուրբ պահել ինձ՝ թէ իմ զգայմանցս, մտածմանցս ու ցանկութեանցս մէջ՝ և թէ իմ բերնից հանած խօսքերիս մէջ։ Արժանի՞ արա ինձ այն պարգևիդ՝ որ ճշմարտութիւնն ու սէրն՝ թէ ուրախութեան և թէ տրտմութեան ժամերումն իմ խօսքերիս վերայ իշխեն, որպէս զի ասածներս ամեն տեղ իբրև բարի սերմն ընկնեն, սրտերի վերայ բարերար ներգործութիւն ունենան, բարօրութիւն, սրտի գոհութիւն և ուրախութիւն յառաջ բերեն ամեն իմ եղբարց սրտի ու հոգւոյ մէջ։

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Ա. թ. 1885 Ը. Գ.)

ԳԼ. Ե.

Անաստաս 661 թուին յաջորդեց Ներսէսին և նորա աշխարհաշէն ընթացքին հետևելով իւր հայրենի Արկուղի գիւղում շինեց կրօնաւորաց վանք կից հիւանդանոցով ու աղքատանոցով։ Անաստասին ընթացակից եղաւ Մամիկոնեան Գրիգոր իշխանը, և Արագած լերան հարաւային արևմտեան սահրոտում, Արուճ անունում շինեց մի հոյակապ եկեղեցի ու շքեղ ապարանք, իսկ Եղևարդ գիւղում՝ միանձանց համար մենաստան։

Անաստաս կաթուղիկոս շինութեանց հետ միասին եկեղեցական բարեկարգութեանց ևս հոգս արեց. կանչեց իւր մօտ Անանիա Շիրակացուն՝ որ հմուտ էր թուաբանական ու տոմարական գիտութեանց և յանձնեց նորան Հայոց տոմարի լինչ լինչ պակասները ուղղելու։ Անանիա Շիրակացի դեռ իրան յանձնուած գործը չէր աւարտել, վախճանեց Անաստաս՝ վեցամեայ իշխանութիւնից յետոյ և 667 թ. յաջորդեց նորան Վանանդայ Ոթմանոյ գիւղից Խաթայէլ։

Խաթայէլի օրով Պողիկեան աղանդաւորները գործակից ունենալով Յուլիանոս Ալիկառնացւոյ հետևողներին՝ սկսեցին գլուխ բարձրացնել և մոլորեցնել տկարամիտներին, քարոզելով թէ Քրիստոսի տնօրէնութիւնները չարչարանքն ու արտմելը և պարտիզում վախենալն առաչօք և երևութական են։ Թէպէտ այս հերետիկոսութիւնը և աղանդաւոր մոլորեցուցիչները տեղի չգտան Հայաստանում՝ այլ արտաքսուեցին, սակայն Կոմիտաս կաթուղիկոսի եղբօր որդի և Եզր կաթուղիկոսի քեռորդի համարուած Քրիստեներ կոչեցեալ Թէոդորոս վարդապետը, որ հմուտ էր աստուածաբանական գիտութեանց՝ գայթակղեալ մտքերը շինելու և ամբիծ հաւատոյ վարդապետութիւնը արդիւնաւորելու համար՝ գրեց ընտիր ճառեր զօրաւոր վաստերով՝ որ հերքումէին աղանդաւորների մոլորութիւնները և հաստատում՝ կաթուղիկէ եկեղեցու ուղղափառ վարդապետութիւնը։ Քրիստեներ բացի գրով աշխատելուց՝ Արագածոտն գաւառի Ս. Աստուածածնի (Տեղը—Դղըը) վանքի վանահայր կարգուած լինելով բաւական աշա-

կերաներ հասցրեց, որոնց մէջ կաթուղիկոսութեան առաջնորդին հասան Սահակ Զորափորեցի և Յովհան եպիսկոպոսներ։ Իսրայէլի օրով բաց ի Ռշտենաւորից՝ նշանաւոր էր նաև Մովսէս Սիւնեցի, երկրորդ Գերհոգեհայր կոչեցեալ, որին վերագրուածն զանազան շարականներ և Մովսէս Խորենացու «Գիրք պիտոյից»։

Իսրայէլին՝ նորա տասնամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ 677 թ. յաջորդեց Սահակ Գ. Զորափորեցի, ճիշտ այն ժամանակ, երբ մի կողմից Խազիրք ասպատակում էին, միւս կողմից Յոյները աւերածութիւններ էին գործում, իսկ Արաբացի մահմետական հրոսակները իրանց կրօնի առաքելութիւնը արդիւնաւորելու համար սուր և հուր, մահ և աւերմունք էին տեղում։ Այսպէս, Խազրաց ասպատակութիւնից յետոյ Մոհմատի առաջնորդութեամբ Արաբացիք արշաւում են Հայաստան և սկսում են իրանց սրածութիւնը, իսկ Հայք՝ սարսափահար հպատակութիւն են խոստանում Մոհմատի բարկութիւնը մեղմելու համար։ Յուստինիանոս Բ. Յունաց կայսրը իմանալով թէ Հայք հպատակել են արաբացւոց՝ սաստիկ բարկանում և պահանջում վտարանդել Արաբներից և իրան հնազանդել ու հպատակել, սակայն Հայք մերժում են կայսեր պահանջը ասելով երբ նեղութեան ժամանակ Յոյնք օգնութեան չեն հասնում, և թողնում են օտարներին սրով և գերութեամբ աւերել ու կործանել, և ոչ այսչափ միայն, այլև իրանք և սրգիծաբար սանջում են ու դրկում, էլ ինչու համար հնազանդեն։ Կայսրը այս պատասխանի վերայ զայրացած՝ բազմաթիւ զօրքեր է ուղարկում Հայաստան, որոնք 28 գնաւոր աւերելուց յետոյ 8,000 մարդիկ էլ վաճառում են ի գերութիւն։ Յունաց այս աւերածութեանը հետևեց արաբացի հրոսակներինը՝ առաջնորդութեամբ Մոհմատի, որից յետոյ Յուստինիանոս անձամբ Հայոց, Աղուանից և Վրաց աշխարհները բոլորովին նուաճելու համար ծանր զօրքով մուտ Հայաստան։ կանչեց իւր մօտ երեք աշխարհների մեծամեծներին ընդհուպ և Սահակ կաթուղիկոսին հինգ եպիսկոպոսների հետ։ կալանաւորեց բոլորին էլ, և այսպէս նեղը ձգելով նուաճելուց յետոյ, ի հաստատութիւն հպատակութեան պատանդներ առաւ մեծամեծ սպառնալիքներով և արձակեց մեծամեծներին, Սահակ կաթուղիկոսին և հինգ եպիսկոպոսներին, ու ինքն վերադարձաւ Յունաստան։

Հայաստանում մնացած Յոյն զօրականները դիտմամբ կրօնա-

կան վէճեր էին յարուցանում և Հայ եկեղեցու սրբութիւնքը անարգում. յանուն Քաղկեդոնի ժողովի անասելի գայթակղական գործեր էին կատարում, զզուեցնում էին բոլորին և ատում ու անարգվում էին բոլորից:

Հայք պարտաւորեալ էին Յունաց մոլեռանդութեան և մեծամիտ ամբարհաւաճութեան դէմ մաքառել. Յունաց, որ կամենում էին յանուն Քաղկեդոնի ժողովի ջնջելով Հայաստանեայց եկեղեցու անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնն իրանց հետ միացնելով: Իսկ արաբացիք հետևելով իրանց առաքելութիւնը արդիւնաւորելու սկզբունքին՝ կամ մահմետականութիւն կամ մահ էին տարածում Հայաստանում: Մահմետականութիւն ընդունելով՝ հայք պիտի կորցնէին իրանց աղգն և ազգային կրօնը, իսկ մահ ընդունելով՝ եկեղեցին պէտք կորցնէր իւր բազկացուցիչ տարրը, իսկ երկիրը՝ իւր հարազատ որդիքը: Հայք անելանելի դրութեան մէջ էին և պաշարուած եկեղեցու և ազգի գոյութեանը սպառնացող արհաւիրքներով: Յոյնք՝ Հայոց արաբացիներին հպատակելու համար երկու անգամ արշաւեցին Հայաստան վրէժ լուծելու և երկիրը իրանց տիրապետութեան տակ առնելու, իսկ նորանից յետոյ մահմետական ամիրապետի հրամանով Հայաստան մտաւ Աբդըլա զօրավարը բազմաթիւ արաբացի հրոսակներով, Հայոց՝ Յոյներին հպատակելու վրէժը լուծելու համար և զարհուրելի անգթութիւններ գործեց. Աբրահամեան նահանգի եկեղեցիների սպասները կողոպտեց և Սահակ կաթուղիկոսին շղթայակապ Դամասկոս ուղարկեց:

Ամիրապետի հրամանով Մահմատ Ոգբա եւս Հայաստան մտաւ սպանելու կամ մահմետական դարձնելու համար: Անճար Հայք հպատակութեան դաշնագիր կազմելով ուղարկեցին Սահակ կաթուղիկոսին մի հնար գտնելու համար. Իսկ նա, Ամերապետից հրաման առնելով երբ Դամասկոսից Հայաստան էր վերադառնում՝ Խառան քաղաքում մահուան անկողին մտաւ. և իմանալով որ Ոգբայի հետ կենդանի չէ կարող տեսնուել, մի աղաչանաց թուղթ գրեց Նորան յայտնելով Հայոց ցանկութիւնը հաւատարմութեամբ ծառայել ամիրապետական իշխանութեան, և խնդրելով որ, արաբացիք փոխանակ երկիրը լրիւ թշնամու երկիր աւերելու, իրանցը համարելով՝ շինութեան և խաղաղութեան հոգս քաշեն և ի հարկաւոր դէպս՝ պաշտպանեն օտար յարձակումներից: Այս

թուղթը գրելուց յետոյ պատուիրեց իւր դին՝ աղաչանաց թուղթը ձեռքին ներկայացնել Ագբայի. իսկ Ագբա այս սրտաշարժ գործողութեան և հայրապետի մահուան համբաւը լսելով՝ ինքն շուտապեց դէպ ի Խառան, այցելեց հանգուցեալի մարմնին և իբրև կենդանւոյ ողջոյն տալուց յետոյ նորա ձեռքից առացաւ աղաչանաց թուղթը. խոստացաւ կատարել ինչ որ գրուած էր, միանգամայն կարգադրելով հանգուցելոյ մարմինը մեծ պատուով Հայաստան ուղարկել։ Սահակ կաթուղիկոս եկեղեցւոյ սայճառութեան և իւր հօտի հոգևոր մխիթարութեան համար ի միջի այլոց գրեց Ողոգոմեան (Ծաղկազարդի) տօնի խորհուրդը բացատարող մի ճառ և Խաչի և Եկեղեցւոյ շարականները։

Սահակին 703 թուին յաջորդեց Բզնունեաց եպիսկոպոս Սիլիա Արճիշեցին այն ժամանակ՝ երբ արաբացիք գրեթէ բոլորովին անպաշտպան գտնելով Հայաստան աշխարհը, սկսեցին սարսափելի հալածանք ընդդէմ քրիստոնէութեան և աւերմունք ու սրածութիւն՝ երկիրը աւելի և աւ տկարացնելու համար՝ որ հեշտութեամբ կարողանան իւրացնել։

Կաշմ ոստիկանը հրահանգուած ամիրապետից՝ Հայոց մեծամեծները կորցնելու համար խաղաղութեան դաշն կապելու պատրուակով նոցա հրաւիրեց Նախիջևան քաղաքը և հաւատաւորմութեան երդումն առնելու պատրուակով եկեղեցի ժողովելուց յետոյ՝ բոլորին ևս եկեղեցու հետ այրեց։ Նոյն անգթութեամբ վարուեց Խրամ և Դուին քաղաքների հետ, քանիկներից ոմանց սպանելով և ոմանց հետի ու բոկոտն գերի վարելով դէպ ի Դամասկոս։ Գերեալների մէջ էին Վահան կամսարականի դուստրն Շուշան, որ հաւատոյ համար արիաբար շատ տանջանքներ կրելուց յետոյ նահատակուեց, և Գողթնեաց իշխան Խոսրովի չորեքամեայ մանուկն Վահան, որ ի սկզբան, Դամասկոսում իբրև մահմետական դաստիարակուելուց յետոյ՝ արքունի գիւանապետ կարգուեց, և յարմար առիթ գտնելով ետմոր ամիրապետի բարեսրտութիւնը 717 թ. հրաման առաւ քրիստոնեայ գերիներին իրանց հայրենիքը դարձնել, և ինքն հայրենիք գնալ և վերադառնալ. բայց հայրենիքում ստանձնելով հայրենի գաւառի իշխանութիւնը՝ յիշեց իւր քրիստոնեայ լինելը, և ուրացութիւնը ապաշխարութեամբ ղրկալով էլ չկամեցաւ վերադառնալ Դամասկոս, սակայն կասկածելով որ արաբացիք կըմատնեն նրան ամիրա-

պետին՝ մի առ ժամանակ թաքստեամբ վանքերում ապրելուց յետոյ, երբ տեսաւ որ էլ թաքստեան հնար չկայ, ինքնին գնաց Դամասկոս և այն տեղ խոստովանողական վարքով նահատակուեց, որի յիշատակը տօնում է սուրբ եկեղեցին։

Ցունական կայսերութիւնը իւր յաւուրս սին ամբարհաւաճութեամբ և կրօնական իրդիրներին անտեղի միջամտութեամբ ատելի էր դարձել հպատակ ազգերին. և չունենալով հարկաւոր ոյժը մահմետական թէև նոր, բայց գօրեղ տէրութեանը դիմադրելու, հետզհետէ կորցնում էր ընդարձակ երկիրներ և բազմաթիւ հպատակ ազգեր, որոնց մին էր Հայաստանը և հայ ժողովուրդը։ Հայք լաւ համարեցին միանգամից Արաբացւոց իշխանութեան տակ մնալ քան Ցունաց, որոնք թշնամու յարձակման ժամանակ ոչինչ օգնութիւն չըհասցնելուց զատ, երբ թշնամին հեռանում էր՝ աւերածութեանց պակասը լրացնում էին առարկելով թէ, ինչու Հայք ընդունել են օտարին և չեն դիմադրել։

Ցոյնք տեսնելով որ Հայք իրանցից վտարանջելով Արաբացւոց իշխանութեան տակ մնան՝ վերջը ուրիշ բան չըկարողացան անել՝ բաց ի ընդդէմ Հայոց նզովք սահմանելուց՝ որ ամեն տարի Զատկի տօնին կրկնում էին։

Ցունաց ապիկարութիւնը տեսնելով Հայք հեռացան նոցանից, բայց Աղուանից դշխոյն և Ներսէս կաթուղիկոսը սկսեցին հակամիտութիւն ցոյց տալ դէպ ի Ցոյներն ու Քաղկեդոնի ժողովը։ Եղիա կաթուղիկոս քանիցս զգուշացրեց դշխոյին և կաթուղիկոսին բայց նոքա յամառատաճ մնացին, իսկ Արաբացիք դէպ ի յոյները հակամիտութիւնը իրանց շահերին վնաս համարելով դշխոյին և կաթուղիկոսին շղթայակապ Դամասկոս աքսորեցին։ Եղիա կաթուղիկոս շուտապեց գնաց Աղուանից աշխարհը և տեղւոյն եկեղեցեաց բարեկարգութեան համար ժողով արեց ու ամն Սիմէօն եպիսկոպոսի կաթուղիկոս ձեռնադրելուց յետոյ Հայաստան վերադարձաւ և տեսաւ որ իւր բացակայութեան ժամանակ՝ Անանիա Նիրակացու աշակերտներից ոմանք, որ Երուսաղէմ էին գնացել, Ցունաստանում տագնապուած Քաղկեդոնի ժողովի սահմանադրութեամբ՝ նոյնը քարոզում էին. խստիւ արգելեց նոցա այդ բանը և իւր հօտի բարօրութեան ու հոգևոր պիտոյից համար անձնանձիր աշխատելով՝ տասնևհինգամեայ իշխանութիւնից յետոյ վախճանեց 718

թուին, որին հենց նոյն թուին յաջորդեց Տաշրաց գաւառի Յովհաննէս Դ. Օձնեցի իմաստասէրը։

Յովհաննէս Դ. իմաստասիրի կաթուղիկոսացած ժամանակ Մանիքեցի Պօղիկեան աղանդաւորները բաւական շատացած էին Հայաստանում, և եղիա Կաթուղիկոս զբաղուած լինելով Հագարացւոց բանակցութիւններն ամրելու, Աղուանից եկեղեցին բարեկարգելու, Քաղկեդոնի ժողովի սահմանով Յագած խռովութեանց առաջքը առնելու գործերով միջոց չունեցաւ աղանդաւորներին բոլորովին դադարեցնելու։ Դժբաղդաբար աղանդաւորները վերին աստիճանի առանձնաշնորհութեան արժանացած՝ սկսել էին աւելի և աւելի յանդգնաբար վարուել։

Այս աղանդաւորները քարոզում էին թէ այնքան չէ սրբոց պատկերները և նոյն իսկ Քրիստի խաչը յարգել. և աւելորդ էին համարում աստուածապաշտութեան արտաքին նշանները, առարկելով թէ սրտագէտն Աստուած կարօտ չէ արտաքին ձևականութեան. քարոզում էին պատուել գեւերին՝ որ նոքա վնաս չը հասցնեն։ Գեւերին յարգում էին ի դէմս արևու և լուսնի. ուստի մէկին ողջոյն արևունը ալիւրով զանգուած. կնոջ առաջին ծնունդը խաղացնելով՝ վեր ու վայր էին ձգում և մեռցնում. մեռած մանկանը՝ կոչում էին միածին և յանուն միածնի երդուելիս՝ ի նկատի էին ունենում այդ մեռեալ մանուկը, յանուն Հօր՝ որի ձեռքն աւանդեց Քրիստոս հոգին երդուելիս՝ ի նկատի ունէին այն մարդը, որի ձեռքին մեռել էր նորածին մանուկը. այս անում էին միամիտների փողը հաճելու համար։

Այս աղանդաւորներից մի մասը կոչվում էին ապոստոլիկ՝ որ բարդի ծառին և յարգութիւն էին տալիս կարծելով թէ Քրիստոսի խաչափայտը նորանից է. իսկ մեւս մասը, որ Հագարացւոց օրէնքից և նահանջ ունէին՝ կոչվում էին Եվխիտ։ Այս աղանդաւորները աւելի կեղծաւոր էին Քրիստոս կոչեցեալ տեղը, որ տեղից սկսեցին տարածուել զանազան կողմեր և պատճառ դարձան պատկերամարտների աղանդին, որ Յունաց մէջ առաւել և զօրանալով՝ կայսրներից ու եպիսկոպոսներից էլ հետևողներ ունեցաւ։

Յովհաննէս Դ. իմաստասէր, Թէոդորոս Քռթենաւորի աշակերտներից նշանաւորն, հմուտ էր արտաքին ու աստուածաբանական գիտութեանց և կատարեալ. ըստ ներքին բարեմասնութեանց լինելով խոնարհամիտ, խաղաղասէր և բազմահանճար; իսկ ըստ արտաքինոյն՝ թիկնաւէտ, վայելչահասակ և փառաւոր՝ պատ-

կառելի ու համակրելի ամենքին. նա ժամանակի պահանջին յարմարելու համար թէև արտաքուստ շատ շքեղ էր հագնվում, բայց ներքուստ՝ մարմնի վերայ քուրձ էր կրում:

Յովհաննէս իմաստասէր աղանդաւորների դէմ գինուեց խօսքով, գրով և գործով. և տեսնելով թէ եկեղեցու մէջ քաղկեդոնի ժողովի պատճառով սկսել է շփոթութիւն, այնպէս որ ոմանք խմորուն էին պատարագում, ոմանք ջրախառն. ոմանք «Սուրբ Աստուած»ը «խաչեցար»ով էին ասում, այլք՝ առաջինը ի դէմն Հօր և երկրորդը՝ ի դէմն Ս. Հոգւոյ առանց խաչեցարի ասելուց յետոյ՝ երրորդը ի դէմն Որդւոյ՝ խաչեցարով էին ասում. ոմանք ծննդեան տօնը ուրիշ օր էին կատարում. այլք հիւանդաց օծումն անհրաժեշտ համարելով՝ սուրբ մեռոնն էին գործածում, ոմանք սուրբ մեռոնի տեղ՝ երուսաղէմից բերուած «խաչի ձէթ» կոչուած իւղն էին գործ ածում, որով և ազգի միջից աւելութիւնն ու խռովութիւնը անպակաս էր: Յովհաննէս իւր հայրապետութեան երկրորդ տարին այս տարակարծն ներմուծութիւնները և ազգի միջից ներքին խռովութիւնները վերացնելու համար Մեծ և Փոքր Հայոց եպիսկոպոսներին հրաւիրելով Դուին հայրապետանիստ մայրաքաղաքը 719 թ. ժողով կազմեց, ուր գեղեցիկ աւենախօսութեամբ եկեղեցու աննախանձելի դրութիւնը ժողովականներին բացատրելուց յետոյ բարեկարգութեան համար իւր սահմանած երեսուն և երկու կանոնները առաջարկեց ի հաստատութիւն:

Բացի այս Յովհաննէս իւր բարեկամութեամբ Վլիթ-ոստիկանի սիրտը գրաւելով՝ նորա ձեռնտուութեամբ Հայաստանից արտաքսեց աղանդաւորներին և պատկերամարտներին:

Մինչ Յովհաննէս իմաստասէր եկեղեցու բարեկարգութեան համար էր հոգում, Բարշաւմայ և Գաբրիէլ Ասորիքը Յովհան մայրաքաղաքացու հերձեալ աշակերտ Սարգսի մոլորութիւնը ի նկատի ունենալով՝ հռչակեցին թէ Հայք հետևում են Յուլիանոս Ալիկառնասցոյ աղանդին: Ասորոց Ամիանաս պատրիարքը անսալով Բարշաւմայ և Գաբրիէլի խօսքերին՝ գրեց Յովհաննէս իմաստասէրին թէ ստոյգ են տարածուած լուրերը. Յովհան իմաստասէր 726 թուին վեց ասորի և վեց հայ եպիսկոպոսների մասնակցութեամբ փոքրիկ ժողով կազմեց, ուր Աղիկառնացու աղանդը նզովելուց յետոյ՝ նզովեց նաև Բարշաւմայ և Գաբրիէլ ասորիներին՝ իբրև զրպարտիչ բանսարկուներին:

Ամիրապետը լսելով Յովհաննէս Իմաստասէրի բարեմասնութեան համբաւը հրաւիրեց Դամասկոս իւր մօտ և սիրով ընդունեց։ Նա տեսնելով հայրապետի դէմքի վայելչութիւնն և զգեստի շքեղութիւնը՝ առանձինն ասաց նորան. «Ոչ ապաքէն ձեր օրէնքով դուք պէտք է հասարակ հագնուէք, ուրեմն ինչո՞ւ ես այսպէս շքեղ հագնուել։ Յովհաննէս պատասխանեց. որովհետև այժմ վերցուել է նախկին սրբութիւնն ու հրաշքի մէջտեղ ազդեցութիւնը, մնում է մեզ շքեղ հագուստով և վայելուչ ու իրտխտ ձևերով ազդել։ և նկատելով որ ամիրապետը գայթակղած է իւր պահանջմանքների վերայ՝ նորա միտքը շինելու համար պարտաւորեալ եղաւ իւր մարմնի վերայից հագած քուրձը ցոյց տալ։ Ամիրապետը. գոհ Յովհաննու տեսակցութիւնից ու խօսակցութիւնից, մեծամեծ պարգևներով յետ ուղարկեց նորան Հայաստան, ուր նա աղգի և եկեղեցու անդորրութեան համար անխոնջ աշխատելով՝ 11 ամեայ իշխանութիւնից յետոյ վախճանեց 728 թուին։

Յովհաննէս Իմաստասէր ընդդէմ Յուլիանոս Ալիկառնացւոյ հետևող ազանդաւորների՝ գրեց «Ճառ ընդդէմ երևութականաց» և Պաւլիկեանց ընդդէմ՝ «Ճառ ընդդէմ Պաւլիկեանց»՝ որոնք պատկերներին և Փրկչի խաչին յարգութիւն տալը կռապաշտութիւն էին համարում։ գրեց նաև քանի մի ճառեր և այլ կանոնական գրուածքներ՝ եկեղեցու բարեկարգութեան համար։ Նարեկաններից՝ Յովհաննէս Իմաստասէրին են վերագրում Աւագ տօների կարգը, և Հռիփսիմեանց «Անակիղէն բանդ Աստուած»։ Համբարձին՝ որ ի սկզբան՝ երգվում էր մարախրոսաց բոլոր տօներին։

ԴՎՆԱՑ Ե. ԺՈՂՈՎ

Գահերիցութեամբ Յովհաննէս Դ. Իմաստասիրի.

Ա. Արքեցութեան մէջ գտնուած եկեղեցականները արժանաւոր ապաշխարութիւնից յետոյ միայն համարձակեն մատչել Սուրբ Խորհրդին.

Բ. Աշխարհական արքեցողները, եթէ չըզդաստանան՝ որոշուեն (եկեղեցուց).

Գ. Աւագ շաբաթին պսակ չըլինի.

Դ. Առաւօտը պսակուողները նախընթաց երեկոյեանը արքեցութեան մէջ չը ղեղխուին.

Ե. Զատկից մինչև Պենտեկոստէն (Հոգեգալուստ) հարսանիք չըլինի։

Զ. Աղուհացից պահոցը (մեծ պահքին) ամէն շաբաթ և կիւրակէ անխափան պատարագ լինի։

Է. Աղուհացից պահոց շաբաթ և կիւրակէ օրերը ձէթով ձկնով և կամ ձկնեղէնով լուծելը իւրաքանչիւրի կամքին թողուած լինի. միայն թէ պարկեշտութեամբ և առանց գայթակղութեան ու բամբասանաց *)։

Ը. Հաղորդութեան հացը՝ անխմոր, իսկ գինին՝ անապակ լինի ըստ ազգային նահնի աւանդութեան՝ ինչպէս սահմանել է Ս. Լուսաւորիչը։

Թ. Հայրապետն օրհնի Սուրբ Մեռոնը։

Ժ. Երեխայութեան ձէթը (մկրտութեան) օրհնի քահանան, և այնքան՝ որքան հարկաւոր լինի **)։

ԺԱ. Հիւանդաց օծման ձէթը քահանան օրհնի յատկացեալ աղօթքով հարկաւոր ժամանակին ***)։

ԺԲ. Պատարագի սեղանը փայտաշէն չըլինի, այլ քարեղէն լինի և անշարժ։

ԺԳ. Մկրտութեան աւազանը քարեղէն լինի։

ԺԴ. Մկրտուողը մկրտարանի դրանը օծուի և ապա տարուի դէպ ի մկրտարանը։

ԺԵ. Պահակել կամեցողներին քահանան տանի եկեղեցին և այն տեղ պահկի։

ԺԶ. Սոյնպէս վարուեն նաև երկրորդ պահին ընդունողների հետ. իսկ եթէ պահկից առաջ շնացած լինին, նախ ապաշխարեն. բայց եթէ չըկամենան պահկուիլ, ու կամենան միմեանցից բաժանուիլ՝ որոշուեն եկեղեցուց։

ԺԷ. Շաբաթ երեկոյեանը «Լոյս զուարթ» ասել և մարտիրոսաց պաշտօն կատարել ու ծունր չըկրկնել ****)։

ԺԸ. Կիւրակէ լուսանալու գիշերը հնկումն անել, աղօթքով ու տքնութեամբ անցեալ աւուրց յանցանքները ջնջել և անձն պատրաստել արժանաւորապէս ընդունելու սուրբ հաղորդութիւնը։

ԺԹ. Առաւօտը, երեկոյեանը և սուրբ պատարագին «Սուրբ Աստուած» ասել։

(*) Է. Ցօդուածը առ հարկէ, ժամանակի պահանջին ղիջանելով ու շփոթութեան տեղի չըտալու համար դրուած լինելով՝ այժմ չէ գործադրվում, և արգելեալ է գործադրութիւնը։

(**) Ժ. Ցօդուածը բոլորովին անգործադրելի է եկեղեցական օրէնքով և սահմանադրութեամբ, որպէս զի սուրբ մեռոնի խորհուրդը և հայրապետի եղական իրաւունքը չըհասարակուի։

(***) Հիւանդաց օծման խորհուրդը Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցին կատարումէ միայն աղօթքով։

(****) Ծունր կրկնելու մասին արգելքը այժմ վերացուած է. վերացուած լինելով այդ մասին յուղմունքը։

Ի. «Սուրբ Աստուած»ը ի դէմս Որդւոյ ասելուն համար երկրք անգամն էլ կրկնել «խաչեցար» և ոչ թէ մի անգամով բաւականանալ։

ԻԱ. Գիշերային ժամին բոլոր սաղմոսները և Յովհան Մանդակունու քարոզներն ու աղօթքները ասել։

ԻԲ. Առաւօտեան ժամի կարգը անթերի կատարել։

ԻԳ. Նոյնպէս և երեկոյեանը։

ԻԴ. Նոյնպէս և կիւրակէի։

ԻԵ. Գիշերապաշտամանը՝ կանոնին համեմատ։

ԻԶ. Ցայտնութեան տօնին՝ ջուր օրհնել. իսկ ծաղկազարդին՝ ոստ բռնել։

ԻԷ. Ցայտնութեան տօնին մկրտութեան և Ծննդեան աւետարանները միասին կարդալ ինչպէս որ երկու տօնն էլ միասին կատարվում է*)։

ԻԸ. Եթէ մէկը հինչ և իցէ նիւթից խաչ չինի, քահանային օրհնել և մեռոնով օծել տայ **)։

ԻԹ. Պաշտել և երկրպագութիւն անել օրհնուած խաչին և չերհրաժարուել երկրպագութիւնից՝ թէև մեռոնել հարկ լինի։

Լ. Կիւրակէ օրը մինչև իրիկուն պաշտել և ոչ թէ մինչև ճաշը։

ԼԱ. Ցիմար հերձուածողների հետ անխտիր հաղորդակցութիւն չունենալ, որ նոքա պատկառեն։

ԼԲ. Պօղիկեան աղանդաւորների մօտ չերթնակիլ, այն տեղ չաղօթել և նոցա հետ չերնստաննենալ, չերխօսել նոցա հետ, այլ հեռի կենալ . . . ։ Եթէ մէկը յարաբերութիւն ունենայ նոցա հետ կամ բարեկամանայ՝ պատուհասուի մինչև դատաստանալը, բայց եթէ նորից յարուի նոցա, մերժուի եկեղեցուց ինչպէս ժանտախտ։

ԳԼ. Զ.

Ցովհաննէս Դ. Իմաստասէրին 729 թուին յաջորդեց Թաւիթ Ա. որ Կոստէից գաւառի Արամօնս գիւղից էր. Թաւիթի օրով երեւելի էր Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսը, որ ի մանկութեան Մոյսէս Բ. Սիւնեաց եպիսկոպոսի մօտ սովորելուց յետոյ գնաց Կ. Պօլիս և Հռոմ կատարելագործուելու համար։ Կ. Պօլսում եղած ժամանակ տեղւոյն Գերմանոս պատրիարքը առաջարկեց ընդունել Քաղկեդոնի ժողովը և հաղորդուել Յոյն եկեղեցուն. Ստեփաննոս հրաժարուեց ասելով. քանի որ իմ ազգը կամենում է առանձնութիւն պահել, և հրաժարվում է Քաղկեդոնի

(*) Ծննդեան տօնը Յունվար 6-ին առաւօտեան ժամերգութեան ժամանակն է կատարվում, իսկ մկրտութեանը՝ Ս. Պատարագին և յետոյ։

(**) Որպէս զի խաչի օծումն շատ չերհասարակաւի և անընտրողաբար չերկատարուի, որոշուած է վիճակի առաջնորդի կամ յաջորդի ձեռքով և նոցա գիտութեամբ օծել։

ժողովից, ես չեմ կարող ընդունել և գայթակղութեան տեղի տալ։ Գերմանոս պահանջեց հաւատոյ դաւանութիւն և Ստեփաննոս կատարեց նորա պահանջը միայն նախկին երեք տիեզերական ժողովների վարդապետութեան համեմատ։ Գերմանոս երբ տեսաւ թէ հնար չկայ Ստեփաննոսին գրաւել, սիրոյ և միաբանութեան թուղթ գրեց դէպ ի Սիւնեաց աշխարհի մեծամեծները յորդորելով նոցա ընդունել Քաղկեդոնի ժողովը. իսկ Ստեփաննոս, որ վերագարձած էր Սիւնիք, մեծամեծների հաճութեամբ մերժական պատասխան գրեց։ Ստեփաննոս Դաւիթ կաթուղիկոսից Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուեց և իւր հօտի ու եկեղեցւոյ պայծառութեան համար արժանի մշակ հանդիսացաւ Ցուղբի, Դանիէլի և Եզեկելի մեկնութիւնը գրելով, բայ ի վառ ձայնից՝ Ա.ւագ օրհնութիւնները ու «Սրբութիւն սրբոց» խաչի շարականը երգելով և Դիանեոսիոս Արիսպագացու ու Գրիգոր Նիւսացու գլուխները թարգմանելով։

Իսկ Դաւիթ կաթուղիկոս Աղբաքացւոց Մոհմատ ոստիկանից ոստիկ նեղուած՝ առանձնանայու իւր Հայրենի Աբամօնս գիւղը, այն տեղ շինեց հոյակապ եկեղեցի և ապարանք, և տեսնելով որ ժողովուրդը անհնարին նեղութեան մէջ է, խնդրեց ամիրապետից փոխել Մոհմատին՝ և տեղը նշանակել ումն Աբգլազիզ անուամբ. Ամիրապետը կատարեց հայրապետի խնդիրը և Աբգլազիզի խաղաղասէր կառավարութեան շնորհիւ երկիրը փոքր ինչ անդորրութիւն գտաւ։ Դաւիթ կաթուղիկոս դարձաւ Դուին և այն տեղ 12 ամեայ հայրապետական իշխանութիւնից յետոյ վախճանեց, որին 711 թուին յաջորդեց Տրդատ Ա. որ Վանանդայ Ոթմանոյ գիւղից էր։

Տրդատ Ա.ի օրով Աբգլազիզի տեղ ոստիկան կարգուեց Ղեխա՝ որի բռնութեամբ Հայաստան սկսեց նորից նեղուել և եկեղեցին հալածուել. վասն զի արաբացի հրոսակները սկսեցին ժողովրդեան հարստահարել։ Հրամայեցին եկեղեցիների խաչերը վերցնել, եկեղեցական սուրբ սպասները վաճառել, գիշերապաշտօն չկատարել, Սուրբ Գրոց ընթերցումը խափանել. հայրենի սովորութեան հակառակ՝ մծրուանները գերծել. երկար գլխարկներ գործ ածել և ի նշան սարկութեան՝ կապարեայ կնիքներ կրել պարանոցի վերայ։ Տրդատ հայրապետ նախարարների հետ այս տառապանքների համար դանդատելով, բայց շահ չըգտնելով՝ յուսահատ վախճանեց 761 թուին 23 ամեայ իշխանութիւնից յետոյ։ Տրդատ Ա.ի հայրա-

պետութեան ժամանակ ներքին խռովութեան պատճառով 755 թ. Բազդատ զարձաւ ամիրապետների (խալիֆների) մայրաքաղաք։

Տրդատ Ա.ին յաջորդեց Տրդատ Բ. Տուբուբերան գաւառի Դասնաւորք գիւղից։ Սորա երեքամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ յաջորդեց 767 թուին Աղձնեաց եպիսկոպոս Սիօն՝ որ մանկութիւնից գաստիարակուած էր Հայրապետանոցում. և որ առաքինի ու սուրբ վարք ունէր և հմուտ էր աստուածային գիտութեան։

Սիօն տեսնելով եկեղեցականների ինչ ինչ թերութիւնները, դարման մատուցանելու համար 768 թուին ժողով կազմեց Արտանից Պարտաւ քաղաքում, որովհետև առ ահի մահ ետական ոստիկանի՝ Դուինում դժուարին էր։

Ժողովին ներկայ էին նշանաւոր եպիսկոպոսներ և իշխաններ, և որոնք չկարողացան ներկայ լինել՝ ժողովի անելիք որոշումներին թղթով հաւանութիւն տուին. ժողովը բարեկարգութեան 24 կանոն հաստատեց որոշելով նաև Ս. Գրոց ընթերցանելի գրքերը։

Ա.յս ժողովի յաջորդ տարին եկաւ Հայաստան այլ ոստիկան ՌՀքիր անուամբ և սկսեց նեղել հայերին. Հայք չկարողանալով այլ ևս հանդուրժել, աստղատակաւոր զօրքերին կոտորեցին. ՌՀքիր բարկացած՝ զօրք բերել տուեց և ահագին կոտորած սկսեց. 700 անձինք սպանուեցին և 12000 էլ գերուեցին. գերիների մէջ էր նաև Սահակ Բագրատունի Պատրիկ՝ որին Մ՚ԷջագեաՀքի մահմետական իշխանը սպանել տուեց և նորա ինչքը յարքունիս գրաւեց։

Սիօն այս աւերածութիւնները տեսնելով՝ սրտի նեղութիւնից 775 թուին վախճանեց 8 ամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ և յաջորդեց Նիգ գաւառի Եղիսատրուշ գիւղացի Եսայի։

Ըստ աւանդութեան՝ Եսայի մանուկ հասակում ի հօրէ որը մնալով Դուինում, հայրապետանոցի դրանը մնաւ իւր մօր խնամարկութեամբ. երբ հարցրին միանգամ նորա մօրը թէ հայրապետանոցի դրանը մանկանդ հետ ինչո՞ւ ես մնացել, և բացօթեակ տանջվում, ու մի տան մէջ չես պատսպարվում։ Նա պատասխանեց. կաթուղիկոսութեան եմ պատրաստում։

Եւ արդարև, մանուկը փոքր ինչ մեծանալուց յետոյ ընդունուեց հայրապետանոցում. զարդացաւ այնտեղ Սուրբ Գրոց իմաստութեամբ և առաքինութեամբ. Գուրգենեայ եպիսկոպոս ձեռնադր-

ուեց և Սիոնի մահից յետոյ՝ իւր մօր մարգարէութեան համեմատ կաթուղիկոս ընտրուեց։

Եսայի կաթուղիկոս ի մանկութենէն կաթուղիկոսութեան պատրաստուելով՝ ի մանկութենէն անտի վարժուեց և այդ իշխանութեան յարակից առաւելանքներին։ Որովհետև Եսայիի օրով առաւել և սաստկացան արաբացի հրոսակների անգթութիւնները՝ երկիրը գրեթէ աւերակ էր դարձել. ստիկանի ձեռքով տանջանքների ենթարկուեցին Սահակ, Համազասպ և Մեհրուժան Արծրունիք. վերջինը հատատոյ ուրացութեամբ ազատուեց, իսկ առաջինքը՝ նահատակուեցին Յայտնութեան տօնին։ Բագուան գիւղի մէջ 40-ից աւելի քահանայք և կրօնաւորներ նահատակուեցին և եկեղեցին կողոպտուեց։

Եսայի կաթուղիկոս այս և սորանից աւելի անկարգութիւնները և անօրէնութիւնները տեսնելով՝ նախարարների հետ բողոքեց դէպի ամիրապետը, բայց անօգուտ։ Այս թշուառութեանց ականատես և ենթակայ Եսայի կաթուղիկոս՝ 788 թուին վախճանեց 13 ամեայ իշխանութիւնից յետոյ։ Հայաստան եկած յաւուրս հարկահանը լսելով հայրապետի մահը՝ բռնութեամբ բերել տուեց Դվինայ հայրապետանոցի և հայրապետական Մայր եկեղեցու անօթները ցուցակագրելու պատրուակով և ինչ որ արժէք ունէր՝ իւրացրեց։ Հայոց թագաւորների գգեստներն էլ, որ ի պահ դրուած էին հայրապետանոցում՝ յափշտակեց։

Եսայի կաթուղիկոսից յետոյ Ստեփաննոս Ա. որ կաթուղիկոսարանի աւագ երէց էր՝ կաշառքով կաթուղիկոսացաւ, բայց իւր ծառայքը ու գրաւ դրած գիւղերը ազատելու համար ստիպուեց վաճառել իւր բոլոր ստացուածքը և այսպէս հազիւ երկու տարի կարողացաւ վարել իւր վիճականօք և ապօրինաբար ձեռք բերած իշխանութիւնը։

Ստեփաննոսին յաջորդեց Յովսէփ կամ Յոբ Դվինեցին և ոչ աւելի քան մի տարի վարելով իշխանութիւն վախճանեց որին 791 թուին յաջորդեց Սողոմոն Գառնեցին։ Սողոմոն Մաքենեաց վանքում մինչև ծերութիւն վարել էր ճգնաւորական կեանք և հմուտ էր Սուրբ Գրոց և արուեստին գիտութեանց։ Ընտրութիւնից յետոյ՝ երբ հրաւիրում էին Դուին, լուսք բացուած ժամանակ ասացին. դու ծեր ես, էլ ինչպէս կամ որքան ժամանակ պէտք է կարողանաս վարել հայրապետական իշխանութիւն։ Նա պատասխանեց. «գնում եմ,

նկարողների գեղեցիկ դեղերով եկեղեցու որմերի վերայ ուրիշ հայրապետների հետ լինէ և ես սեւացնել *)»։

Սոչոմենին, նորա մի ամեայ իշխանութիւնից յետոյ յաջորդեց Դէսպոտ Ա. Հոյլորքուկ մականուանեալ՝ որ Արտաճոսան գաւառի Օշական գիւղից էր։ Դէսպոտ միայն երեք տարի վարեց իշխանութիւն և 795 թ. յաջորդեց Արտաճոսան գաւառից Յովսէփ Բ. Կարին մականուանեալ։

Սորա օրով Խուզիմա ոստիկանը գրաւուելով հայրապետական կալուածների արդիւնաւորութեամբ՝ կամենում էր սեպհականել այդ կալուածները՝ դրամով գնելու պատրուակով, բայց Յովսէփ չկատարեց ոստիկանի ցանկութիւնը ասելով որ՝ ինքը իրաւունք չունի այդ կալուածները վաճառել, որովհետև Աստուծոյ անուան նուիրեալ են։ Ոստիկանը շատ ստիպելուց յետոյ, երբ տեսաւ թէ Յովսէփ կաթուղիկոս անողոքելի է, գանակոծ անելուց յետոյ բանտը դնել տուեց, որ գուցէ կըզիջանի. բայց հայրապետը քաջութեամբ տարաւ բոլոր հարուածներին և չկամեցաւ ձեռնամուխ լինել հայրապետանոցի կալուածքներին։ Ոստիկանը որպէս զի ցոյց տայ ժողովրդին թէ Յովսէփ կաթուղիկոս ղիջել է վաճառել գիւղերը՝ հանել տուեց նորան բանտից և երեք պարկ դրամներ յանձնեց իւր ծառաներին հրապարակով դէպ ի հայրապետանոց տանել բայց և գաղտնի ճանապարհով դարձեալ նրան բերել։ Սակայն բանտից դուրս գալով հայրապետը ոստիկանի մեծամեծների առաջ յայտնեց եղած խարդաւանքը և բողոքեց ոստիկանի բռնութեանց համար, և այսպէս յետ տուաւ կալուածները բայի Արտաշատ աւանից։ Իսկ ոստիկանը զայրացած՝ շարունակ վշտացնում էր Յովսէփ կաթուղիկոսին, որի եղբայրը տեսնելով այս

(*) Այս դէպքից երևում է որ ի հնումն սովորութիւն է եղել հայրապետների պատկերները նկարել եկեղեցու որմերին. երևի այդ սովորութեան համեմատ ցայսօր մենք տեսնում՝ ենք Սուրբ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներին յաջորդող եպիսկոպոսների պատկերները մինչև Ս. Լուսաւորիչ նկարուած Մայր Աթոռոյս հարաւակողմն գտնվող Ս. Յովհաննու Մկրտչի կիսաբոլորակ խորանի որմերի վերայ, իսկ Սուրբ Լուսաւորչի ու նորա որդւոց և թոռանց պատկերները՝ Մայր Աթոռոյս հիւսիսակողմն գտնվող Ս.Ստեփաննոսի կիսաբոլորակ խորանի որմերի վերայ։ Եթէ չենք սխալվում՝ Երուսաղէմի Սուրբ Յակովբեանց Աթոռի Հայոց պատրիարքների պատկերներն ևս յաջորդաբար մինչև ցայսօր նկարուած են նոյն վանքում՝ յատակացեալ տեղը։

անգթութիւնները, սպառնալէ ոստիկանին ամբաստանել նորա մասին գէպ ի ամիրապետը, իսկ ոստիկանը իւր ծառաների ձեռքով ծածուկ սպանել է տալիս նորան և ձգում Մեծամօր գետի ծովակը։ Յովսէփ Բ. իւր հարազատի մահուան պատճառով սաստիկ յուզեալ՝ մահից է մտնում և կարճառև հիւանդութիւնից յետոյ վախճանում է 806 թուին 11 տարի վարելով իշխանութիւն։

Յովսէփին 806 թուին յաջորդեց Դաւիթ Բ. Կակոպեցի. Դաւիթ ժամանակով և ս. քրիստոնէական հաւատոյ համար բազմաթիւ նահատակներ են լինում մանաւանդ Խուզիմայի մահից յետոյ մինչև Հոլիի ոստիկան նշանակուելը։

Հոլ ոստիկանը տեսնելով որ ոմն Սևադայ միաբանելով իւր հետ նախարարներին՝ կամենում էր դաւել իրան Դաւիթ կաթուղիկոսին խաղաղութեան պատգամաւոր ուղարկեց նախարարների մօտ բայց ընդունելի չեղաւ. Հոլ պատերազմաւ յաղթանակեց, և պատերազմի մէջ ընկաւ Սահակ Սիւնի։ Դաւիթ հաշտեցրեյ Հոլին նախարարների հետ, որով և ապահովեց երկրի խաղաղութիւնը, և խորին ծերութեան մէջ՝ 833 թուին 27 ամեայ իշխանութիւնից յետոյ վախճանեց, և նոյն թուին յաջորդեց Ովայեցի Յովհաննէս Ե։

Յովհաննէս Ե. իւր հայրապետութեան 8րդ տարին տեսնելով որ Բագարատ, որ Հոլից յետոյ պատրիկ էր նշանակուած անսալով չարամիտ մարդոց ապիրատութեան՝ մտադիր է գահընկէց անել իրան, հրապարակաւ բանադրեց նորան և գնաց Գեղարքունեաց Այրից կամ՝ Գեղարդայ վանքը ու այն տեղ մի քանի ամիս առանձնացաւ թաքստեամբ։ Սմբատ Բագրատունի սպարապետ երնջակուամ՝ ժողովելով իշխաններին և եպիսկոպոսներին ու քննելով հայրապետի մասին եղած ամբաստանութիւնը, երբ տեսաւ թէ զրպարտութիւն են, ժողովականաց հաճութեամբ նորից հրաւիրեց նորան վարել իւր հայրապետական իշխանութիւնը։

Բագարատ տեսնելով որ առանց իրան, նախարարները ժողով կազմելով՝ նորից Յովհաննէսին հրաւիրեցին ի հայրապետութիւն՝ զայրացաւ շատ և կամենում էր վրէժխնդիր լինել, բայց հենց այս ժամանակները լինքն ամբաստանութեան ենթարկուելով ամիրապետի առաջ՝ հաւատոյ ուրացութեամբ հազիւ կարողացաւ ազատուել մահից։ Ասում էր, որ նոր նշանակուած էր ոստիկան և պիտի ձերբակալէր Բագարատ պատրիկին՝ սկսեց աւերել և կոր-

ծանել, և հենց այս ժամանակ չարաչար սպանուեց Տարօնոյ Սահառնցիներից։ Երկիրը աւերակ էր դառնում ոչ միայն արաբացի հրոսակներից, այլ և Սիսական Բաբգէն և Սիւնեաց Գրիգոր Սուփան նախարարների միջև ծագած երկպառակութեան պատճառով, որոնք ընդերկար միմեանց դէմ պատերազմելուց յետոյ սկսեցին միմեանց երկիրները աստատակել։

Մինչ Սիւնիք և Սիսականք միմեանց դէմ էին զինուած, Ապուսէթի սպանման գոյժը, նորա զօրքերից ոմանք փախստեայ գնալով հասցրին ի լուր ամիրապետի, որ սաստիկ զայրացած՝ իւր մերձաւորներից Բուղա անուամբ մէկին անհամար բազմութեամբ ուղարկեց Հայաստան պատուիրելով սպանել այն ամենին՝ որոնք կարող են զէնք առնել կամ ծերացած են, և գերել կանանց ու երիտասարդներին և այսպէս երկիրը անապատ դարձնել։ Բուղա աւելի քան իրան պատուիրածները անգթութիւններ կատարեց— սուր, հուր, աւերածութիւն և հաւատոյ ուրացութիւն կամ նահատակութիւն տարածելով ամենայն տեղ։ Իսկ Յովհաննէս Ե. Հայրապետը, որ այդ դժբաղդ ժամանակին շրջումեր գայլերի մէջ նիքներին մատնուած իւր հօտի մէջ մխիթարելու և քաջալերելու համար, այսքան արհաւիրքներն ու թշուառութիւնները տեսնելով ի սիրտ և ի հոգի վշտացած՝ Գեղարքունի գաւառի Մաքենեաց վանքում 854 թուին վախճանեց։

ՊԱՐՏԱԻԻ Բ. ԾՈՂՈՎ

Գահերիցութեամբ Սիօն Կաթուղիկոսի Հայոց.

Ա. Եպիսկոպոսը, քորեպիսկոպոսը և երէցը եթէ փառքի և զւօսանքի ետևից լինելով, հօտը խնամելու անհոգ լինին, լուծուեն կարգից։

Բ. Եպիսկոպոսները չը համարձակեն ուրիշի վիճակում ձեռնադրութիւն անել։

Գ. Եպիսկոպոսները յանցաւորներին չը ստիպեն եկեղեցուն լան տալ, այլ հրամայեն՝ որ նորա իրանց ձեռքով աղքատներին տան։

Դ. Եպիսկոպոսները թոյլ չը տան քորեպիսկոպոսներին կամ քահանաներին սեղան հաստատել կամ եկեղեցի օրհնել։

Ե. Եպիսկոպոսները չը համարձակեն մեռոն օրհնել կամ օրհնուածի վերայ աւելցնել, այլ իւրաքանչիւր տարի հայրապետից ստանան։

Զ. Եպիսկոպոսները եկեղեցում վարդապետ (քարոզիչ) նշանակեն ժողովրդին անխափան քարոզելու և սորվեցնելու համար։

Է. Գիւղերում վանքեր շինուին, որ այնտեղ իջևանեն առաջնորդները. շին-

ուեն նաև հիւրանոցներ և աղքատանոցներ և նոցա հասոյթը գիւղից լինի։

Ը. Մկրտութեան աւազանը մաքուր պահուի և յարգուի, և մկրտութեան ջուրը անսուրբ տեղեր չըթափուի։

Թ. Քահանան, որին հասել է եկեղեցուն սպասաւորելու կարգը (հերթ) սրբութեամբ անի, և աստուածային աղօթները անխափան կատարի։

Ժ. Եթէ քահանան ամուսնանայ (երկրորդ անգամ) կամ երկրորդ անգամ ամուսնացեալը ձեռնադրուի՝ չըհամարձակի քահանայութիւն անել, այլ ապաշխարութեան մէջ մնայ։

ԺԱ. Քահանաները զգոյշ լինին հաւատացեալները անհաւատի հետ պսակելուց։

ԺԲ. Սուրբ Խորհրդի նշխարքը քահանայք և ոչ թէ աշխարհականները պատրաստեն։

ԺԳ. Եթէ քահանան երրորդ պսակ օրհնի այնպիսիներին, որոնք յառաջագոյն շնացած են, նզովեալ լինի և պսակը քանդուի։

ԺԴ. Եկեղեցու ինչքը և սպասները չըվաճառուեն։

ԺԵ. Կրօնաւորները վանքից վանք չըտեղափոխուեն. և եթէ կոչուած չեն ի վիճակ առաջնորդութեան, այնտեղ մնան՝ ուր կրօնաւորուել են։

ԺԶ. Մինչև չորրորդ զարմը մերձաւորներին ամուսնութիւն չըլինի։

ԺԷ. Ախտացեալների համար, որոնք քաղաքներից հալածուած են լինում՝ անկեղանոց շինուի, և նոցա համար ժողովրդից հասոյթ սահմանուի։

ԺԸ. Մեռնելու ժամանակը եթէ աւելանայ մի բան՝ ողորմութեան տուրք տրուի այն եկեղեցուն ու վանքին՝ որի ժողովուրդ է մեռնողը։

ԺԹ. Եպիսկոպոսից յանդգնուածը, եթէ մեռնելուց առաջ չարձակուի, հանդիսով չըթաղուի։

Ի. Եթէ երեխան առանց մկրտութեան մեռնի, թաղման հանդէս չըկատարուի նորա վերայ։

ԻԱ. Քորեպիսկոպոսները չըհամարձակին եկեղեցու դուռը փակել, կամ աստուածային պաշտամունքը խափանել։

ԻԲ. Գիւղի իշխանը, եթէ հարկը պահանջելու համար եկեղեցին փակել տայ՝ նզովեալ լինի։

ԻԳ. Հնթանոսների մէջ գերի գնացողները եթէ հնթանոսների կրօնի հաստատ վարուած լինին և նոցա նման անպատշաճ բան գործեն թէև ուրացած էլ չըլինին իրանց հաւատը, գարձի ժամանակ մի տարի ապաշխարեն և չորեքշաբթի և ուրբաթ օրերը ծոմ պահեն։

ԻԴ. Հին օրէնքից (հին կտակարան) Սուրբ Գիրք համարուեն Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց Բ. Օրինաց, Յեսուայ, Դատաւորաց, Հռութայ, չորս գիրք Թագաւորաց, երկու գիրք Մնացորդաց, Եզրայ երկու գիրքը, Տոբիթայ, Յուդիթայ, Եսթերայ, Մակաբայեցւոց, Սողոմոնի չորս գիրքը, Ցոբայ, Դաւթի Սաղմոսները, տասն և երկու Մարգարէից, Եսայիայ, Երեմիայ (Բարուքը հետը) Եզեկիէլի, Դանիէլի, և Սիրաքայ Իմաստութիւն գրքերը։

(Շարունակելի) Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐ ԵՄ ԵՍ ՄԻՉՑ ՏԽՈՒՐ.

(Գանգապ).

Անցնում է ձմրան պաղ սառնամանին,
Հալչում է ձիւնըն, նորոգվում բնութիւն.
Երկիրն է զարթնում, թողում իւր խոր քուն,
Նոր կեանք է շընչում և կենդանութիւն.

Արարածք համայն ուրախ են զուարթ
Ցեսնելով գարուն իւրեանց յանդիման,
Փըսփսում է ուրախ իւրաքանչիւր մարդ,
Խընդում է անդամ անասունն անբան.

Այ և մի խեղճ սիրտ, որ շատ անտարբեր
Խըլիում է միշտ թոյլ և է անըզգայ,
Իր քաղցրըն գարուն այն աւետաբեր
Չէ հընչում ուրախ և լարերն նորա.

Այն իմ խեղճ սիրան է, ես եմ նորա տէր,
Էր եմ ես տխուր . . . Դո՛ւ գիտես, իմ Ցէր.
Միակ և անբաղդ եմ այս աշխարհում,
Մայրենի բարբառն ինձ չէ ողջունում.

Ընթանում եմ ծանր, չունիմ ես հանգիստ,
Անբաղդութիւնն ինձ հետևում է միշտ,
Եգեմն ինձ համար տեսնելով փակուած,
Ցխուր եմ տխուր, անա՛ռ Աստուած.

Ցղայ հասակից ես սակաւ անգամ
Ցեսայ իմ բաղդին ինձ դէմ ժպտալիս,
Թաժինս եղել է միշտ և տառապանք
Սփոփանք իմ Ցէր, Ա՛բաթիլ Աստուած.

Իսկ այժմ սրտաբեկ, մահուան դուռն հասած՝
Առ քեզ եմ դիմում, Բաբեբաղ Աստուած,
Փրկէ՛ անբաղդիս գէթ այս վայրկենում
Թող չունչս փչեմ մայրական գրկում.

ՊԱՆԴՈՒԽՏ.

Մարտ 1885.
Լ՛Քբերթում

ՍՈԽԱԿ

Մելամաղձոտ տխուր դէմքով
Ընկուզի ծառի տակ նստած
Նիհար ձեռքս դրած ճակտիս
Ես վշտացած միտք էի անում։

Զղուեցի փուչ աշխարհի
Սրտամաշուկ կարգ կանոնից,
Եւ սիրտս, խիստ դառնացել էր
Ստոր մարդոց բիրտ խօսքերից։

Ամեն կողմից ատելութիւն
Դէպի բարին ու գեղեցիկ,
Ամեն կողմից մամոնային՝
Խնկարկում են մոլի մարդիկ...

Դորա համար բազմութիւնից
Փախել էի սարսափահար,
Որ բնութեան ազատ ծոցում
Ես գտնէի ինձ մխիթար...

Ցանկարծ մի ձայն մեղմ, սրտառուչ
Ականջիս հնչեց իմ ականջին.
Ցետ նայեմ, ո՜հ, տեսնեմ սոխակ
Կանգնած ծառի փոքրիկ ճիւղին,

Նա երգում էր իր երգն անոյշ
Ա՛յնպէս քաղցր, այնպէս փափկիկ,
Որ դալկալիկ նորա ազդու
Ընժեց սրտիս քնքոյշ թելիկ...

Ես մոռացայ համայն աշխարհ
Իր անզգայ շնչողներով,
Ցեղի տուին ցնորքներս
Խորհրդաւոր իրանց մտքով...

Իսկ աչքերս լցուեցին
Գոհարի պէս արտասուքով,
Վշտահարած սիրտս ճիչած՝
Անմահական խնդութիւնով...

Եւ հասկացայ վեհ սոխակի
Ախորժելի անոյշ լեզուն,
Եւ իմացայ արտասուելով
Այն թռչունը ինչ էր ասում։

Նա լալիս էր այս աշխարհի
Ակտի մարդոց գործքի վերայ,
Որ կենարար արդարութիւն՝
Նորանցից է միշտ բացակայ...

Նա ղրկածին, յուսահատին
Կեանք և յոյս էր ներշնչում.
Նա չարերին, անգութներին
Վեհ Արարչից մա՛ր էր խնդրում...

Նա ստրուկներին, ճնշածներին
Յորդորում էր միշտ՝ աշխատանք,
Որովհետև աշխատութիւն
Է ճորտութեան միակ փրկանք...

Երգի՛ր, սուլի՛ր, չքնաղ սոխակ,
Քո աննման երգը սիրուն.
Հնչի՛ր ձայնդ բարձր—բարձր,
Լսեցնել տո՛ւր միտքդ ամենուն...

Ազդեցիր, ո՜հ, կոտրած սրտիս
Քո ոգեշունչ մեղմ երգերով.
Ահա, կրկին դէպի մարդիկ
Դիմում եմ ես վեհ քայլերով...

ՍՐԻՆԳ.

ԾՆՈՂԻ ԿՍԿԻԾԸ.

Ո՞վ անիրաւ մահ, ինչո՞ւ դու շուտով
Գաւիթս մտար քո սուր մանգաղով,
Եւ անխղճաբար իմ գառնուկներին՝
Անհնայ զոհեցիր քո սուր մանգաղին։

Կամենկեր էին, պիտի աճէին,
Ջուխահաս դարձած՝ ճիւղ արձակէին.
Բայց անգթաբար ինձնից խլեցիր՝
Մայիսի տեղը՝ Յունուար ինձ տուիր։

Տղիս անունը՝ կոչվումէր Արամ,
Անմեղ աղջկանս՝ Ծաղիկ Անթառամ,
Առանց խղճալու դու իմ արտասուաց՝
Ինձ բաժին թողիր վիշտ, սուգ, կոծ ու լաց։

Գրկիցս երկուսին միասին առար
Դէպ ի նեղ ու մութ գերեզման տարար,
Իսկ ես թշուառս՝ յոյսս կորցրած՝
Նոցա շիրիմներն եմ ամուր գրկած։

Ո՛վ անիրաւ մահ, գաւիթս մտար,
Զոյգ զաւակներս միանգամ տարար,
Նորանցով պէտք է բաւականանայիր՝
Թէ սգոյ տունս նորից պէտք է գար։

Ով գթած Աստուած, վշտահար սրտով
Քեզի եմ դիմում լաց ու կսկիծով
Գառնուկներիս մահն ինձ շատ համարիր
Նոր տալը՝ քո կամքն է, եղածը պահիր։

Գրաշար Ներսէս Մ. Տ. Աւետիքեանց։

ԱՋԳԱՅԻՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ·

Կաթուղիկոսական ընտրութեան տարին դեռ չը լրացրած՝ ահա նոր հանդերձանք, նոր հոգացողութիւն և նոր ջանք՝ նորոգ ընտրութիւն կատարելու։

Անցեալ տարուայ ընտրութիւնը արդէն պատմական անց՝ կատարուեց· բայց շատ անգամ պատմական անցքերը՝ որչափ և տպաւորիչ, սակայն իրանց յարակից պարագաների պատճառով մնումեն անհետևանք և չեն յառաջացնում այն արդիւնքը, ինչ որ պէտք էր ակնունել։ Ահա այս տեսակ պատմական անցքերի կարգին էր պատկանում անցեալ տարուայ ընտրութիւնը։

Ամսոյս 10-ից սկսած համախմբումներին Մայր Աթոռս ազգի ներկայացուցիչները ամենայն Հայոց հայրապետի ընտրութիւնը կատարուելու համազգային ժողովով. խռնվումէին ամենայն տեղերից և յատկապէս Ալէքսանդրօպօլից ու Երևանից հետաքրքրքիր մարդկանց բազմութիւն ակնատես և ականջալուր լինելու։

Ամենայն տեղ կենդանութիւն և շարժումն է· խօսում և վիճումեն, գովում գովաբանումեն այս ոքին, դատում դատափետում այն ոքին· ամեն մինը կամենում իւր ցանկացածի ընտրութիւնը յաջողեցնել· լինումեն առանձին ժողովներ և խորհուրդներ, հետաքրքիր բազմութիւնը ակնդէտ սպասումէ լսել պատգամաւորներից նոցա կարծիքն ու ցանկութիւնը, բայց նոքա խորհրդապահ են։

Ամսոյս 18-ին աշխարհական և հոգևորական պատգամաւորների ներկայութեամբ Վեհարանի դահլիճում եղաւ առաջին ոչ պաշտօնական ժողովը՝ գործերին ծանօթանալու։

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Անդամք Սինոդի

Տեղակալ Աթենապետի Սինոդի Մկրտիչ Արքեպիսկոպոս,
Մեսրոպ Եպիսկոպոս Սմբատեան,
Անդամք. Յովակիմ Եպիսկոպոս Տէր Գրիգորեան,
Երեմիա Եպիսկոպոս Գալստեան,
Ներսէս Եպիսկոպոս Խուդավերդեան,
Մամբրէ Վարդապետ Անանեսեան.

ՊԱՊԳԱՄԱՐՔ ՄԱՔԱՆՈՒՆԵԱՆ ՄԱՅՐ ԱՐՈՒՈՅՆ.

Սերովբէ Եպիսկոպոս Արարատեան
Գրիգոր Եպիսկոպոս Ազափիրեան
Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Յարութիւնեան
Գրիգոր Ծ. Վարդ. Տէր Ստեփաննոսեան
Արիստակէս Վարդ. Դաւթեան
Ստեփան Վարդ. Մելիք Դաւթեան
Յովակիմ Վարդ. Ղամէքեան.

ՎԻՃԱԿԱՒՈՐՔ ՈՒՍՈՒՑՉՔԱՆԷՑՔ.

Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան կառավարիչ Ղարաբաղու
ի կողմանէ Վիճակաւորին Ատրպատականի՝ Մկրտիչ Արքեպիսկոպոս,
ի կողմանէ Վիճակաւորին Պարսկաստանի և Հնդկաստանի՝ Սերովբէ Եպիսկոպոս Արարատեան,
Թադէոս Եպիսկոպոս Ջիւնաիան կառավարիչ Շամախւոյ
Սուքիաս Եպիսկոպոս Պարզեան կառավարիչ Ամորախանի
Գրիգորիս Եպիսկոպոս Ալուանեանց՝ կառավարիչ Կարուց
Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան՝ վիճակաւոր Տփխեաց
Գէորգ Եպիսկոպոս Սուբէնեան՝ Փոխ. Թեմակալ Երևանայ.
ի կողմանէ վիճակաւորին Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանայ՝ Կարապետ Վարդ. Տ. Գալստեան.

ԱՂՔԱՔԱՀԱՆ ՊԱՊԳԱՄԱՐՔ.

Իսահակ Մանուկեան Ալաճալեան՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ.
Ներսէս Ասլանեան Աֆթաբէգեան՝ Ղարաբաղու.
Ալէքսանդր Ղազարեան՝ Կարուց.
Սիմէօն Աֆթանասեան՝ Երևանայ.
Աբգար Յովհաննիսեան՝ Տփխեաց,
Համբարձում Առաքելեան՝ Ատրպատականի.
Յովհաննէս Սարգսեան՝ Ամորախանի,
Ալէքսանդր Լալայեանց՝ Շամախւոյ,

Ամսոյս 19-ին առաւօտեան նախ քան Ս. Պատարագ սկսուելը հոգևորական և աշխարհական պատգամաւորները ժողովուեցին

Վեհարանի Դահլիճը յարդարելու հանդիսաւոր գնացքը դէպ ի եկեղեցի։ Սկսեց զանգահարութիւնը և պատգամաւորները զոյգ զոյգ դուրս եկան Վեհարանից եկեղեցի գալու. գնացքին առաջնորդումէր Ամենապատիւ Տեղակալ Հայրը յաջմէ և յահեկէ ունելով Տէրութեան Ներկայացուցչին և Սինոդի Պրօկուրօրին, սոցա հետեւումէին Սինոդի անդամները, Առաջնորդներն ու Մայր Աթոռոյս Միաբանութեան պատգամաւորները ըստ աւագութեան ձեռնադրութեան, ապա աշխարհական պատգամաւորները. գնացքը վերջաւորվումէր Սինոդի առենադպրով և նորա օգնականներով։

Հետզհետէ հանդիսատես բազմութիւնը ճանապարհի երկու կողմը բակ էին բոլորել և յուսոյ ակնկալութեամբ զգածուած՝ աչքները սեւեռած ակնապարար գնացքին՝ աղօթումէին և յաջողութիւն ցանկանում սկսած գործին։ Գնացքը հասաւ եկեղեցի. եկեղեցական պատգամաւորները գնացին դասերը իրանց տեղը կանգնելու, իսկ աշխարհականք Ս. Իջման տեղի առաջ աջ և ձախ կողմերի սիւների տակ տեղ բռնեցին, եկաւ և Երևանի նահանգապետը։ Սկսուեց Ս. պատարագը. պաշտօնագիչն էր Մայր Աթոռոյս Աւագ Լուսարար և Սինոդի անդամ Գեր. Տէր Երեմիա Սրբազան եպիսկոպոս։

Հանդիսաւոր Սուրբ պատարագից և թագաւոր կայսեր ու կայսերական տան բարօրութեան համար գոհաբանական մաղթանքից յետոյ՝ Նորին Սրբազնութիւնն պատարագիչ Հայրը խոսեցաւ բազմութեան ներկայութեամբ աշխարհական պատգամաւորներին, երդմնեցրեց հետևեալ երդմնաթղթով։

«ԵՐԴՄՆԱԳԻՐ.

«Մեք ի ներքոյ անուանեալքս խոստանամք և երդնումք յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի Սրբոյ Էջմիածնի նորա, առ այն թէ, ցանկամք և պարտիմք յայսմ առաջիկայ ընտրութեան Մայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց վասն գլխաւոր կառավարութեան Սրբոյ Լուսաւորչեան եկեղեցւոյ Հայոց և Մայրագոյն տեսչութեան եկեղեցականաց նորին, ըստ մաքուր խղճի մտաց և պարտուց մերոց առանց իրիք աչառութեան և սեպհական ակնկալութեանց ի բաց հերքելով ի մէնջ զամենայն մախանս թշնամութեան և կամ զորպիսի և իցէ շաղկապ մեր-

ձաւորութեան և բարեկամութեան, ընտրել ի միջոյ հոգևորականաց հայրենի եկեղեցւոյն մերոյ՝ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանճարոյ և խղճի մտացն առաւել ընդունակագոյն համարիմք մեք, և յորմէ ակնուսնիմք, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զորս դնէ ի վերայ նորա այս վեհ աստիճան հոգևոր — հանդիսացուսցէ նա զինքն ջերմեռանգ պաշտօնեայ Աստուծոյ և հոգևնակ տնօրէն բարօրութեան և օգտի եկեղեցւոյն Քրիստոսի և հաւատացեալ հայրապետական իշխանութեան նորա ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի։ Իսկ եթէ այլ ազգ վարեսցուք, յորժամ իրրև անհոգ չօգտէ եկեղեցւոյ և ճշմարիտ որգւոց նորին, յորում կայանայ և սեպհական օգուտն մեր, ենթադրեմք զանձինս մեր մեղադրանաց եղբայրակցաց մերոյ և ի հանդերձելումն պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի նորա։ Ի վախճան երդմանցս վասն անաչառ ընտրութեան՝ համբուրեմք զբան և զխաչ Քրկչին մերոյ. ամէն։»

Երդմնեցուցի Երեմիա Եպիսկոպոս

Ըստ այսմ երդման երդուաք
Օգթար Յովհաննիսեանց
Համբարձում Առաքելեանց
Ներսէս Աթաբէկեանց
Աղէքսանդր Ղազարեան,
Յովհաննէս Սարգսեանց
Աղէքսանդր Լալայեանց
Սիմէօն Աթանասեանց
Խաչատուր Սլաճալեանց.

Ա յաքանալ վերջացաւ այսօրուայ գործը։

Ընտրութիւնը տեղի ունեցաւ Մայր Տաճարի մէջ։ Սեղանը երկարած էր Սուրբ Իշման Տեղի առաջից մինչև աւագ դուռը. Տէրութեան Ներկայացուցչի համար սեղան դրուած էր Հարաւային որմնասիւնի առաջ, նորա առաջը՝ առենադպրի և իւր օգնականների սեղանն էր. Հիւսիսային որմնասիւնի տակ դրուածէր Պրօկուրօրի սեղանը։ Ամսոյս 20-ին առաւօտը պատգամաւորները ի ձայն զանգակաց Վեհարանից եկեղեցի եկան ըստ տրամադրութեան օրինաց՝ ազգիս նշանաւոր եպիսկոպոսներից չորս ընտրելիները ընտրելու։ Ժողովը գաղնիակ էր և ժողովականաց թիւը 30։

Նախքան գործ սկսելը Ամենասուրբ Տեղակալ Սրբազան Հայրը ասաց «Հայր մեր» աղօթքը, և երկու սարկաւագներ քաղեցին «Զգործս ձեռաց մերոց» «Տէր ապաւէն» սաղմոսը. «Ի մէջ տաճարին» «Սուրբ խաչիւս» և պահպանիչ աղօթքներից յետոյ Ամենասուրբ Տեղակալ Հայրը տեղի կալաւ նախագահական բազկաթոռի առաջ. պատգամաւորները բռնեցին իրանց տեղերը—հոգևորականք՝ Սրբազան Նախագահի աջ կողմից, իսկ աշխարհականք՝ ձախ կողմից. մինչ ամենքը յոտին կանգնած էին, Ամենասուրբ Տեղակալ Հայրը ծոդովը բացեց հետևեալ ճառով.

«ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԴԵՐԱՄԵԾԱՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ ԱԶԳԻՍ։

«Այս խորհրդաւոր և նշանաւոր պահուս ժողովելով Սրբոյ Մայր Տաճարիս մէջ, իւրաքանչիւր ոք մեզանից կըզգայ անշուշտ յանձն իւր ներկայ պատկառելի ակմբիս մեծախորհուրդ նպատակն. կզգայ անշուշտ ամէն ոք մեզանից թէ ինչ ծանրակշիռ պարտականութիւն ստանձնած է, զոր լիայոյս հաւատով վստահութիւն դրած է մեր վերայ զմեզ ընտրող միլիոնաւոր հայ ժողովուրդն իւր ակնդեցականներով հանդերձ։ Մեր ամենասիրելի ազգայնոց այդ կատարեալ հաւատն և վստահութիւնն ի բարին և յօգուտ ազգի և եկեղեցւոյ ի գործ դնելու և մինչև վերջն իւրեանց յանձն առեալ նուիրական պարտաւորութեանց հաւատարիմ մնալու համար, Դերամեծար Պատգամաւորք Ազգիս, համաձայն զարաւոր սովորութեան՝ ի մէջ տաճարիս և առաջի Սրբոյ Սեղանոյս՝ յանուն ահաւորին Աստուծոյ, հրապարակական ուխտիւք և երդմամբ վաւերացուցին պայն, որպէս զի Աստուծով ձեռնարկելի իւրեանց սոյն վսեմ Գործն կատարեն ըստ ամենայնի խղճի մտաք։ Միանգամայն ի բաց մերժելով և մերկանալով զՀոգին դատապարտելի կուսակցութեան, զՀոգին գահավէժ խորութեան. քնաւ երբէք չնախապաշարիլ որ և իցէ ներքին և արտաքին պատճառներէ, այլ զգենուլ զՀոգի հաւատարմութեան, արդարասիրութեան և անաչառութեան, քաջ ի միտ առնելով թէ՝ ոչ յանխորհուրդս ժողովուած եմք մեք այս միակ պարծանաց սրբավայր Տաճարիս մէջ, այլ թէ ժողոված եմք, միայն յանուն հայութեան. ուրեմն և յանուն հայութեան և Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ ընտրելու եմք Պետ և Գլուխ։ Ուստի ընդ ամենայն ծագս սիրտարկ

ու ուրեք եթէ կայ և կգտնուի հայ անուանով և կրօնիւք գէթ մի ճետ և անհատ, նա անդամ է ազգային մարմնոյ և հարազատ որդի մերս եկեղեցւոյ: Խորութիւն պէտք չէ մեզ գիտել· զի ամենեքեան որդիք եմք միոյ առաքելական եկեղեցւոյ և անդամք միոյ ազգի· իսկ եթէ խորութիւն ընդելու համար անհրաժեշտ հարկ կրնկատուի՝ բայց միայն ընականաբար և բարոյապէս այդ անբռնաբարելի ճշմարտութիւնն ճանաչելու եմք և որոնելու այն արդիւնաւէտ իրականութեան և գործողութեան շրջանակին մէջ, զոր ահաւասիկ դրած են գրաւորապէս մեր առաջնե մեծամանուքիւն Հայոց Ցաճկաստանի, որից այժմ շեղիլն՝ որպէս թուի ինձ, չէ վայելուչ ըստ ուղիղ տրամադրութեան ազգային գարաւոր անժխտելի պայմանաց: Եւ որպէս զի ապացուցանեմք մեր ազգին, ապացուցանեմք ընդհանուր լուսաւորեալ աշխարհիս, թէ հայք և իւրեանց ազգային գործերն լրջմտութեամբ և նրբաքննին հեռատեսութեամբ գիտեն տնօրինել և գիտակցաբար գործել՝ մանաւանդ թէ տխուր անցեալէն մի խրատական ազդու դաս և առնելով, վճռեմք համերաշխ սիրով միաբանութեան ընտրել ի գահակալութիւն և ի յաջորդութիւն մեծի պարիւնաղնին Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի և յընդհանրական Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց այժմեան գտնուածնելէն այն արժանաւորագոյն հոգևորական անձն՝ որն պատկառանք կրնամածէ ամենեցուն, և որոյ գործոց և կենաց բարի անցեալն և ներկայն՝ նա մանաւանդ վարդապետական կատարեալ հմտութիւնք և եռանդագին գործունէութիւնքն արդէն անկասկելի յատկութիւնք են դարձել նորա համար: Փութամք ընտրել ի հովուապետութիւն Հայաստանեայցս ազգի և եկեղեցւոյ այնպիսի արժանընտիր անձն՝ որ իբրև արիւն հոլիւ իւր անքուն հսկողութեամբն դէպ կեցած է միշտ իւր հաւատացեալ հօտին: Այդ ցանկալի է տեսանել այդպիսի բարեմասնութեամբ օժտեալ մի անձն՝ անցած ի գլուխ ղեկավարութեան ազգի և եկեղեցւոյ: Փութամք ի վերջոյ միանալ ի մի սիրտ և հոգի համերաշխութեան և իբրև որդիք հարազատ երկանց մօրս մերս Սուրբ եկեղեցւոյ ի բաց պարուրել նորա լուսափայլ երեսէն այն սգազգեաց տխրութեան կրկնակի սև թոյր քօղն, որով ահաւասիկ երեք ամք են պատած է, նա կայ և մնայ ի սուգ թախծութեան: Զի յետ մահուան Երջանկայիշատակ Գէորգ Գ. մեծագործ Հայրապետի՝ երբ անցեալ տարի տոնական պա-

տուա մեծար պատգամաւորաց ժողովով ընտրեց ազգն և եկեղեցին ի Հայրապետութիւն ամենայն Հայոց Սրբազան Պատրիարգն Կ. Պոլսոյ Տէր Ներսէս Վեհերորդ, որոյ մէջ արդարև տեսնուած էին Աստուածաձիր և դրուատելի բարեմասնութիւնք, բայց ա՜ւաղ, զի անակընկալ օրհասական մահն զրկեց զմեզ ազգովին վայելելուց նորա Հայրապետական շնորհն։

«Ի կնիք բանիս աղաչեսցո՛ւք ի բոլոր սրտէ զամենակարողն Աստուած, դարձեալ յարուցանէ մեր բարձրաստիճան եղբայրներից նոր մարգարէ, առաջնորդ և հովիւ բարի առաջնորդել, հովուել և խնամել զազգ և զեկեղեցի ճշմարտութեամբ և արդարութեամբ։ Աղաչեսցո՛ւք զսուրբ Հոգին Աստուած, ազդել և ներշնչել ի մեզ հոգի զգաստութեան և զգօնութեան, և ընդ մարգարէին Հայնակկելով ասացուք «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ» Լուիցէ Տէր Աստուած աղաչանաց մերոց. Ամէն։—»

«Տեղակալ Առենապետի Սինոդի Սրբոյ Էջմիածնի

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

«ի 20 Ապրելի 1885 ամի
Ի. Ս. Էջմիածին»

Ապա իւրաքանչիւր ժողովական նստեց իրան յատկացեալ աթոռը և սկսուեց այն աւուր սահմանեալ գործը։

Ի միջի հարկաւոր թղթոց կարդացուեց Կոստանդնուպոլսոյ ազգային ժողովոյ հետևեալ թուղթն առ Ամենապատիւ Տեղակալ Հայրը, որով Նորին Սրբազնութիւնը իրաւունք էր ստանում Տաճկահայոց պատուիրակ և ներկայացուցիչ լինել։ Եւ ահա.

Ամենապատիւ Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Արժանընտիր Տեղակալ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց Ընարատեան Մայր Աթոռոյ կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի։

Ազգային երեսփոխանական ժողովն Հայոց Թուրքիոյ գումարեցաւ յառաջնում աւուր Մարտ ամսոյս ի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոջ Գալաթիոյ վասն մասնակցութեան յընտրութիւն կաթուղիկոսի ամենայն Հայոց ըստ որամադրութեան Ազգ. Սահմանադրութեան. ժողովն յետ խորհրդակցութեանց և քննու-

թեան պարագայից իրացն՝ որոշեաց յայս նուագ եւս կատարել զմանակագութիւն Հայոց Տաճկաստանի, ըստ եղանակին բայսարելոյ ի տեղեկագրին որ ի 16 Ապրիլի 1884 ամի ստորագրեալ յերջանկայիշատակ Պատրիարքէն Ներսիսէ և ուղղեալ առ Ամեն. Տեղակալն Կաթուղիկոսի ամենայն Հայոց, առ Գեր. խորհրդական անդամն Ս. Սինօդին և առ Համազգային Ընտրողական Ժողովն, զորոյ պատճէնն կցեմք ընդ սմին։

Ժողովն ի նկատի առեալ զի ատենական գործողութիւնք, որք կատարեցան յանցելումն ամի վասն կազմութեան ցանկի ընտրելեաց, ունին և պահեն զհանգամանս օրինաւորութեան և վասն այժմու ընտրութեան, բայց միայն զի թերացեալ գտանէր եռանուն ցանկն ողբալի վախճանմամբ ազգասէր Հայրապետին Ներսիսի արժան դատեցաւ յաւելուլ ի նմա զանուն յաջորդին՝ որոյ ստացեալ էր յետ երից ընտրելեացն զառաւելագոյն թիւ ի քուէարկութեան ազգային ժողովոյ։

Ըստ այսմ՝ ահա փութամբ առաջի առնել Համազգային Ընտրողական պատկառելի ժողովոյ Մայր Աթոռոյդ զցանկ երից ընտրելեաց Հայոց Տաճկաստանի հանդերձ թուով քուէիցն որք են

Ա. Ամենապատիւ Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Խրիմեան նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ, քուէ 50։

Բ. Գեր. Տ. Մելքիսեդէկ Ս. Արքեպիսկոպոս Մուրատեան առաջնորդ Ջմիւռնիոյ վիճակին, քուէ 42

Գ. Գեր, Տ. Խորէն Ս. Եպիսկոպոս Աշըքեան Հայր վանուցն Արմաշու, քուէ 18

Արդ՝ փութամբ թղթովս այսուիկ յանձն առնել Բարձր Սրբազնութեան Ձերում զպաշտօն Պատուիրակութեան Հայոց Թուրքիոյ, խնդրելով զի հաճեսջիք ընթեռնուլ զայս պաշտօնական թուղթ մեր յատենի Համազգական ընտրողական պատկառելի ժողովոյն, ներկայացուցանել նմա զայսօրիկ զերիս Ընտրելիս յանուն Համօրէն վիճակացն Հայոց որ ընդ հովանեաւ Օսմ. պետութեան և, ըստ եղանակի նշանակելոյ ի տեղեկագրին անցելոյ ամի, բարդել ի քուեայսն մեր զգումար քուէից պատկառելի ժողովոյդ, որպէս զի եպիսկոպոսն՝ որ ստացի զառաւելագոյն թիւ ձայնիցն, հռչակեսցի կաթուղիկոս ամենայն Հայոց ըստ նախնեաւանդ ճիսից և օրինաց Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ։

Ամենապատիւ Ս. Հայր, հաղորդեալ զայսոսիկ որոշմունս Ազգ. ընդհ. ժողովոյ, քաջայոյս եմք վի հանրաճանօթ իմաստութեամբ և շրջահայեաց հեռատեսութեամբ ձերով և Գերապատիւ Սինոդականաց և Մեծ. Ատենակալ պատգամաւորաց ընտրողական բարձր ժողովոյն, ունիմք ի յանգ հանել յօգուտ և ի շինութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ զընտրութիւն արժանաւորագոյն Գահակալի յԱթոռ սրբազան Առաքելոցն մերոց, Թադէի և Բարդուղիմեայ և Առաքելասարաս Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։

Ակն ունելով ի շնորհաց ամենազօր Հոգւոյն Սրբոյ յաջող ելից ընտրութեանս ի պահպանութիւն անբաժանելի միութեան համազգական Կաթուղիկէ Եկեղեցւոյ մերոյ սրբոյ, մեծաւ փափաքանօք սպասեմք աւետաւոր տեղեկագրի ձերում և մնամք.

Ամենապատուութեան Ձերում

Աղօթարար ի Տէր

Նախագահ Ազգային Երեսփոխանական ժողովոյ

Պատրիարքական Տեղապահ

ԳԻՈՐԳ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՐՈՒՍՃՈՒՔԼԵԱՆ

ի դիմաց Ազգային Երեսփոխանական ժողովոյ

Ատենապետ — ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՓԵԱՆ

Ատենադպիր — ՅԱԿՈԲ Ս. ՊՕՇՆԱԿԵԱՆ

Երբ պէտք էր ի լուր ժողովականաց կարգային նշանաւոր եպիսկոպոսների անուննները՝ ժողովը որոշեց Կ. Պօլսոյ պատրիարքարանի եռանուն ցանկը ընդունել անփոփոխ, և չորորդ ընտրելի նշանակուելով Մակար Արքեպիսկոպոս, ժողովը վակուեց ճաշից յետոյ ժամը 1 անցած, որ սկսուած էր առաւօտեան ժամը 9-ին։

Հետևեալ օրը ամսոյս 21-ին առաւօտը նոյն հանդերձանքով պատգամաւորները ի ձայն զանգահարութեան Վեհարանից եկան եկեղեցի. ժողովուրդը՝ որ աւելի և աւ բազմաթիւ էր, սրտատրոփ սպասում էր ժողովի հետևանքին։

Ժողովը բացեց Ամենապատիւ Տեղակալ Հայրը մաղթանքով. ժողովականների թիւը 30 էր. սկսուեց չորս ընտրելիների ցուցակի վերայ քուէարկութիւն ընտրելիի թղթի վերայ գրելով «ընտրեմ» կամ «ոչ ընտրեմ»։ Եւ ահա այսպէս՝

Ա. Խրիմեան Մկրտիչ Արքեպիսկոպոս տասցաւ 13 ձայն ընդդէմ 17-ի.

Բ. Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Մելքիսեդէկ Մուրատեան տասցաւ 30 ձայն (միաձայնութեամբ).

Գ. Խորէն Եպիսկոպոս Աշըգեան 3 ձայն ընդդէմ 27-ի.

Դ. Մակար Արքեպիսկոպոս 16 ձայն ընդդէմ 14-ի.

Քուէարկութենէ յետոյ Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս ՄԵԼՔԻՍԵԴԷԿ միաձայն ընտրութեամբ 30 ձայնով Համարուեց Ա-ՌԱՋԻՆ ԸՆՏՐԵԱԼ ի կաթուղիկոսութիւն, իսկ Նոր Նախիջեւանի ու Բեսարաբիոյ Արքեպիսկոպոս ՄԱԿԱՐ 16 ձայնով ընդդէմ 14-ի երկրորդ։

Իսկոյն կազմուեց և ստորագրուեց հետեւեալ օրագիրը, որով Ժողովը առաջարկումէ Սինոդին անել իրեն վերապահեալ անօրէնութիւնը։

«Ի 21 Ապրիլի 1885 ամի. Ժողովն Սրբազան Արք-Եպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, Վարժապետիւ Վարդապետաց և ականաւոր աշխարհական պատգամաւորաց, եկելոց ի վիճակացն Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի, գումարեալն ի Տաճարի Վանից Սրբոյ Էջմիածնի վասն ընտրութեան Գահակալին Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ բացեալ ի 20 Ապրիլի զՀետեւակատութիւն իւր առ ի գործ ընտրութեան Կաթուղիկոսի ամենայն Հայոց կանոնաւորեալն կարգաւ, համաձայն առաջադրութեան Տեառն Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու ի $\frac{31 \text{ Մարտի}}{6 \text{ Ապրիլի}}$ տարւոյս № 3343, ի ներկայութեան Ընդամէն խորհրդարանի Նորին Պայծառափայլութեան, Տայնի Մովսէսեանց—Վրիւրիի՝ ներկայացուցչի Հարձրագոյն Իշխանութեան, ուր ընթերցեալ զանուանս ականաւոր Արք-Եպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց գտեալց ի սահմանս Ռուսիոյ, Թուրքիոյ և Պարսկաստանի, յետ պատշաճականն սմին իրի առենախօ-

սութեանց՝ կայացաւ ընտրութիւն չորից ընտրելեաց (կանդիտատաց) յաստիճան կաթուղիկոսութեան ազգիս, որք են 1.) Ա՛մենապատիւ Տէր Մկրտիչ Ա՛րք-Եպիսկոպոս Խրիմեան, 2.) Գերապատիւ Տ. Մելքեսեդէկ Եպիսկոպոս Մուրատեանց, 3.) Գերապատիւ Տ. Խորէն Եպիսկոպոս Ա՛ղբեան և 4.) Գերապատիւ Տ. Մակար Ա՛րք-Եպիսկոպոս. և վասն այսորիկ կազմեցաւ առանձին ընտրողական թերթ ընդ ստորագրութեամբ Ընդամոց ժողովոյն: Իսկ յայսմ աւուր, յետ բացման երկրորդ ժողովոյն՝ առաջարկեցան ցուցակք վերոյիշեալ չորեցունց Կանդիտատաց, և ըստ համաձայնութեան ժողովոյն արժանի եղեն կոչման աւագագոյն ընտրելեաց (կանդիտատաց) երկուքն ի նոցանէ, այն է նախ՝ Գերապատիւ Մելքիսեդէկ Եպիսկոպոսն Մուրատեանց — միաձայն, և Գերապատիւ Մակար Ա՛րք Եպիսկոպոսն 16 ձայնիւ հանդէպ 14 ձայնի տուելոց յօգուտ նոցա: Վ՛անորոյ և ժողովն Հոգևորական և աշխարհական պատգամաւորաց — Սահմանեաց, Զսոյն ընտրութենէ երկուց կանդիտատաց յաստիճան Նայրապետն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց անցուցանել յօրապիր, և վաւերացուցեալ զայն ընդ ստորագրութեամբ համայն Ընդամոց ժողովոյն՝ յանձնել ի Սինօդն Սրբոյ Էջմիածնի վասն առնելոյ զկախեալն յինքենէ զպատշաճականն տնօրէնութիւն, համաձայն սահմանեալ առ այս օրինադրեալ կարգին:

Ա՛յս գործողութիւնները կատարելուց յետոյ Ամենապատիւ Տեղակալ Սրբազանը յայտնեց ժողովին իւր գոհունակութիւնը յաջող հետևանքի համար, իսկ կառավարութեան ներկայացուցիչ Տայնի Սոլեանիկ Պրիքիլ շնորհաւորեց յաջող ընտրութիւնն և այսպէս ժողովը վերջացաւ:

Բացուեցին Տաճարի դուները, եկեղեցու շուրջը խռնուած բազմութիւնը շրջապատեց եկեղեցու գաւիթը և ճնշող անձկութեամբ սպասումէր լսել ընտրեալի անունը. Թերթիկների վերայ գրուած քուէարկելեաց ցանկը ստացած քուէներով ժողովրդից ոմանք ստացան պատգամաւորներից և հնչուեց միաձայն ընտրուած Մելքիսեդէկի անունը, ամբողջ ժողովուրդը իրրև մի մարդ միաձայն սկսեց կեցցէ աղաղակել, և գլխարկները վեր բարձրացրած աւետում էին միմեանց ցանկալի անձի ընտրութիւնը. կեցցէների հոսանքի միջից պատգամաւորները գնացին դէպ ի Վեհարան, իսկ ժողովուրդը անսահման ուրախութեամբ հրճուէր։

Ամբողջ գիշերը վաղարշապատում ժողովրդական ինքնոյք էր տեղական նուագածութեամբ, և ամենայն տեղ հոծ էր Մելքիսեդէկ անուամբ։ Ով է Մելքիսեդէկ, որի անունը ահա երկու ամբողջ տարի խօսվում է որպէս արժանի ոք կաթուղիկոսութեան։ Մելքիսեդէկ իւր ստացած կրթութեամբ, իւր վարած պաշտօններով և իւր գրական վաստակներով էր արժանաւորներից արժանաւորագոյնը։

Նորին Սրբազնութիւնը իւր կրթութեամբ և ծագմամբ մեզ հայրենակից է և լաւ է ճանաչում մեր երկիրն ու ժողովուրդը. Նա երկար ժամանակ Տաճկաստանում լինելով և վարելով զանազան պաշտօններ, ճանաչումէ տաճկահայոց. Նա Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում ընդունելով կուսակրօնութեան կոչումն և բաւական ժամանակ այնտեղ կենալով ճանաչումէ և գիտէ վանական կարգ ու կանոնները. ահա բարեմասնութիւններ, որ ամեն մարդու ձիրք և բաժին չեն։

Ժողովը վերջանալուց յետոյ ամսոյս 21-ին երեկոյեան 5 ժամին կառավարութեան ներկայացուցիչ Նորին Գերազանցութիւն Տայնի Սովետնիկ (գաղտնի խորհրդական) Պրիբիլ Թողեց Մայր Աթոռս՝ իւր վարմունքով ընդհանուր համակրանք և յարգանք յիշատակ թողնելով Միաբանութեանս մէջ։

Ամսոյս 22-ին աշխարհական պատգամաւորները հետևեալ ուղերձը ներկայացնելով Ամենապատիւ Տեղակալ Հօրը, Նորին Սրբազնութեան օրհնութիւնը առնելով յուլի ընկան գնալ իրանց տեղերը։

ՈՒԴԵՐՁ։

Ամենապատիւ Սրբազան Տէր ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Տեղակալ Առենապետի Սիւնհոդոսի Սրբոյ Էջմիածնի և Նախագահ Համազգային Կաթուղիկոսական Ընտրողական Ժողովոյ։

ԳԵՐԶԴՕՆ ՏԷՐ.

Ընտրութեամբ արժանաւոր ժառանգի Աթոռոյ Հայրապետութեան Ազգիս զարշօնն պատգամաւորութեան մերոյ յաւարտ հանեալ՝ գամք ընդ ողջոյնս հրաժեշտի մերոյ և ընդ հայցուածս հայրական օրհնութեան Ձերոյ հաւաստել Ամենապատիւ Սրբազան Ձեռնադր ջնորհակալութիւնս մեր սրտագին վասն խոհական ղեկավարութեան, որով առաջնորդեցիք Համազգային ժողովոյն ի բարեյաջող ելս, ըստ կրկնակի յուսոյ և բաղձանաց, որոյ նուիրական է աւանդ հայրենատուր ի պաշտպանութիւն միութեան ընդ եղբարս մեր քնակեալս ի Տաճկաստան և յատկահովութիւն խաղաղութեան, ա՛ռ՝ ո՛պ՝ռ՝նայ՛ ք՛ե՛կ՝ո՛՜ն ֆ՛ր՛կ՝ա՛ռ՝ո՛՜ւ՛ֆ։ Մանաւանդ թէ ի պաշտպանութիւն իրաւատութեան Հայրապետի ամենայն Հայոց յայնպէսի ընդդէմ՝ որք գործուց ի գարս նուիրագործեալ կանոնական իրաւամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, սեպհական են միայն իւրում՝ Մայրագոյն Բարձր Իշխանութեան և գրաւական բարոյական յառաջադիմութեան ապագայ սերնդոց Ազգիս՝ հաւատարիմ՝ հպատակութեամբն և սիրովն առ Մայրն իւր գորովալի առ եկեղեցին Հայաստանեայց, ոմն մեզ գեղեցիկ ապացոյց վստահութեան թէ՝ արդարև բուռն են ի Ձեզ իղձք բազմագիւի բարեմասնութեան, զոր ապացուցիք գործովք իրև հաւատարիմ՝ և հարազատ պաշտօնեայ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ։

Ցուսալ յուսամք համարձակօրէն Գերզդօն Տէր, զի բարեձիր խոհականութեամբ և հաստատամտութեամբ Ձերով այուհետև ևս զղեկ վարչութեան գործոց Մեծի Սրբոյ Աթոռոյս մերոյ պահպանեալ անասասան, հասուցանելոց էք ընտրեալ Հայրապետի մերոյ, առաւել ևս նրախտագիտութեան պարտաւորս առնելով որպէս զմեզ նոյն և զժողովուրդն համօրէն, որոց ամենեցուն փա-

փագ մեծ և տեսանել զՄիթռն Սուրբ վախչատսէս պայծառացեալ ի յննձա իչին սրտից հարազատ զաւակաց իւրոց։

Ի 22 Ապրիլ 1885 ամի
Ի Ս. Էջմիածին։

Պատգամաւորք Համազգային ընտրողական ժողովոյն.

Իսահակ Մանուկեան Ալաճալեանց.
Ներսէս Ասլանեան Ամիրէկեանց.
Ալէքսանդր Լալայեանց.
Ալէքսանդր Պաղտեանց.
Սիմէօն Ամանասեան.
Աբգար Յովհաննիսեան.
Համբարձում Առաքելեանց.
Յովհաննէս Սարգսեանց։

Ընտրութիւնից յետոյ Ամենապատիւ Տեղակալ Հայրը ի կոչմանէ Հոգևորականաց Մայր Աթոռոյս Ընտրատուրական հեռագիր ուղարկեց առ ՏԷՐ ՄԵԼՔԻՍԵԴԷԿ Ընտրատուրելով Նորին Սրբազնութեան ընտրութիւնը. ևի հեռագիր և ս ուղղեց դէպ ի Կ. Պօլսոյ Պատրիարքարանը՝ յայտնելով Կաթուղիկոսական ընտրողական Համազգային ժողովի հետևանքը. ահա Ամենապատիւ Տեղակալ Հօր հեռագրներն և նոցա պատասխանները։

ՀԵՌԱԳԻՐ ԱՄԵՆ. ՏԵՂԱԿԱԼ ՀՕՐ.

«Ի ՋՄԻՒՈՒՆԻԱ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

«ԹԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ

«ՄԵԼՔԻՍԵԴԷԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

«Համազգային Ներադրի ժողովն միաձայնութեամբ ընտրելով այսօր զՁեզ ի Գահ Հայրապետութեան, փութայ շնորհաւորել ղցանկալի ընտրութիւն Ձեր, փափագելով տեսանել զՁեզ այսր ի գիրկ Մօրս Լուսոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

«Նախագահ ժողովոյն և Տեղապահ
«ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ»

« Ի Կ. ՊՕԼԻՍ

« ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՑՈՑ

« *Համազգային ժողովն Էջմիածնի միաձայնութեամբ ընտրեալ ի Գահ Հայրապետութեան զՏէր Մեկ.ԲԻՍԵԴԷԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆ Զմիւռնիոյ, փութամ ծանուցանել Ազգային ժողովոյդ գոյակոչ ընտրութենէս ;*

« *Նախագահ ժողովոյն և Տեղապահ*
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ »

ՊԱՏԱՍԽԱՆԻ·

« *Ամենապատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոս Նախագահ Համազգային ժողովոյ և Տեղապահ, յԷջմիածին ;*

« *Ընդունեցաք սրտագին շնորհակալութիւնս՝ Ձեր շնորհաւորութեանց և Համազգային ժողովի վստահութեան ու համարման համար » ;*

« ՄԵԼ.ԲԻՍԵԴԷԿ. »

Ընտրական գործերը վերջանալուց յետոյ Սինօդը օրագրութեամբ ըստ որոմայրութեան օրինաց՝ ժողովի օրագրութիւնը և ընտրական թերթերը յանձնեց Շամախւոյ թեմի կառավարիչ Գեր. Թադէոս Եպիսկոպոս Զիւնականին Տփխիսի պատգամաւոր Մեծ. Պ. Աբգար Յովհաննիսեանի և Ղարաքաղի պատգամաւոր Ներսէս Աֆաթէգեանի հետ ներկայացնել գլխաւոր Կառավարութեան հասուցանել ուր հարկն է ի պատշաճաւոր առնօրէնութիւն ։

Հայ ազգը դարերից ի վեր արժանացած լինելով Ռուսիոյ բարեխնամ Կառավարութեան և Ամենողորմած Կայսրների շնորհաց ու գթութեանը՝ այժմ և առ նոյն գթութեան աւհատատչեայն վայելելու աներկմիտ ենք ։ Աներկմիտ ենք որ Ամենողորմած Կայսրն ամենայն Ռուսաց — Ալէքսանդր Գ. հաստատելով Համազգային ժողովոյ միաձայնութեամբ ընտրուած Կաթուղիկոսացուն, ի բաց պարուրեալ կը տեսանենք Հայրապետական Աթոռոյ սև քօղը և ճրճռանօք կը գոչենք· « Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս » ։

«ԱՐԱՐԱՏ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Թէլաւի Հայոց Հոգևոր երկսեռ ուսումնարանների Հոգաբարձութիւնս պատիւ ունի ուղարկել 1884 թ. միամեայ տնտեսական համառօտ հաշիւը, որ քաղուածէ թեմական վերատեսչի ձեռքով ժապաւինեալ մատեանից և կարգացուած ներկայ տարուայ Սուրբ Վարդանանց հանդիսին ժողովրդեան խուռն բազմութեան ներկայութեամբ, ուստի խոնարհաբար խնդրում է Ձեզ զետեղել այն «Արարատ» ամսագրի մէջ ի գիտութիւն հայ — հասարակութեան և ի միամտութիւն մանաւանդ նոցա, որոնք գործին ի մօտոյ տեղեակ չըլինելով «Նոր — Դար»-ի միջոցով ձգտում են արատաւորել մեր գործունէութիւնը, մոլորեցնելով միևնոյն ժամանակ յիշեալ լրագրի թէ ընթերցողներին և թէ նորա մեծ. խմբագրին. Մեզ համար բաւական է և կատարեալս վարձատրուած ենք համարում մեզ, որ տեղիս հասարակութիւնը, և հոգևոր վարչութիւնը մեզ հետ է և համակրում մեր գործունէութեանը յօգուտ Թէլաւի Հոգևոր դպրոցների.—

Համառօտ ցուցակ մտից Հոգևոր երկսեռ ուսումնարանաց Հայոց Թէլաւի, քաղեալ ի ժապաւինեալ մատենէ ի 1884 ամի.	Ր.	կ.
Ի կրպակէ մոմավաճառութեան եմուտ յօգուտ ուսումնարանաց	929	53
Թոշակադրամք յօրիորդաց եմուտ յընթացս 1884 ամի . .	879	80
Վարձ ուսումնարանապատկան տանց և կրպակաց . .	176	50
Ցերկուց եկեղեցեաց սահմանեալ ի հոգևոր իշխանութենէ .	180	
Ճեմխտատեղեաց	89	89
Վարձ թատրօնական բեմի	60	
Մուտք ի թատրօնական ներկայացմանէ	90	50
Նուիրեալ դրամք ի մեռելատարց	55	
Նուիրեալ դրամ ի դրամատանէ Թէլաւի . . .	50	
Ի վիճակախաղէ	212	82
Ուսման վարձ ի մանկանց	136	
Գումարն է .	2860	4
1883 թուից մնացած մայր գումարն է	1308	74
Ընդհանուր գումարն է.	4168	80

Համառօտ ցուցակ ելից Հոգևոր երկսեռ ուսումնարանաց Հայոց Թէլաւի քաղեալ ի ժապաւինեալ մատենէ ի 1884 ամի.	Ր.	կ.
Ռոճիկ ուսուցչաց	1920	
Ռոճիկ ծառայից և մոմավաճառի	210	
Վասն փայտից երկուց ուսումնարանաց	67	20
Ի վերայ նորոգութեան երկուց ուսումնարանաց . .	150	85
Վասն ձեռագործաց օրիորդաց Թելից և այլ իրեղինաց . .	74	6
Գնեալ նստարանաց և գրատախտակաց	38	
Ռոճիկ թեմական վերատեսչի փոստային ծախիւք . .	50	32
Առաքեցաւ ի կոնսիստօրն վասն ճանապարհածախուց Նահանգական դատարանի (окружный судъ) Անդամից, ի մասին տեղական քննութեան ուսումնարանապատկան պագեաց և վարելահողոց գտելոց ի գիւղն Փաշատան Հանդերձ փոստային ծախիւք.	101	34

Հարկ արքունական գնահ. տուքեան ուսումնարանապատկան տանց և պգեաց	20	90
Մանր ծախք ապակեա լուսամտից, յատակաց նորոգութեան և պլոց	107	30
Տուաւ վան ածելոյ դեղին մոմ տասն և մի փութ	23	85
Գնեցաւ մի փութ պատրոյգ յԱրիւէ Մատիկեանց	13	
Գումարն է	2776	82

Ծանոյց. Երկսեռ ուսումնարանների 1884 թ. ծախք՝ երկու հազար եօթը հարիւր եօթանասուն և վեց (2776) ռուբլի, ութսուն և երկու (82) կոպէկ դուրս գալով ընդհանուր գումար՝ չորս հազար հարիւր վաթսուն և ութ (4168) ռուբլի, ութսուն (80) կոպէկից՝ մնում է Հոգաբարձութեան մօտ առ մէկն Յունվարի 1885 ամի մի հազար երեք հարիւր իննսուն և մի (1391) ռուբլի, իննսուն և ութ (98) կոպէկ.—Պէտք չէ մոռանալ այն, որ Հոգաբարձութիւնս 1884 թ. ընթացքում ունեցել է շատ անակնկալ ծախսեր, ինչպես ներկայ հաշուի ծախքի տակ №№ 6 և 8 բոլորովին անակնկալ նուիրելի են եղել և յետագայ տարիներին չի կարող լինել։

Նախախագահ Հոգաբարձութեան՝ ԳԷՈՐԳ ԱՒԱԳ Ք. Տ. ՍԱՐԳՍԵԱՆ
Քարտուղար՝ ԵՐՈՒԱՆԴ ԱՊՐԻԼԵԱՆ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.

Արարատի հրատէրքին միտ դնելով, Մոսկուայի Հայ ուսանողների մանկական գրքերի հրատարակութիւնը հաձեցաւ իւր հրատարակութիւնները ուղարկել Մայր Աթոռոյս և Ճեմարանի գրադարաններին։

Ընորհակալութիւն։

Ընորհակալութեամբ ստացանք
«ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ» հեղինակութիւն Ս. Վարշամեան, գինն է մի րուբլի։

ՎՐԻՊԱԿ.

Սոյն ամսագրոյ մի քանի օրինակների մէջ 162 և 169 երես ի բաց թողուած են հետևեալ անուններն. Անգամ Սինօդի Գեր. Ներսէս Եպիսկոպոս Խուդավերտեան, Պ. Աղէքսանդր Լալայեան՝ պատգամաւոր Թեմին Շամախւոյ և Պ. Աղէքսանդր Ղազալեան՝ պատգամաւոր Կարուց։

ՑՈՒՑԱԿ ԴՊՆՈՒԹԵԱՆՑ ՁԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ $18\frac{84}{85}$ Թ.

Թ.	ԱՌԱՐԿԱՑ.	ԴԱՍԱՐԱՆ.	ՈՒՍՈՒՑԻՉ.	ԸՆԹԵՐԱԿԱՑ
Մայիս				
4	Գերմաներէն	Գ. Լսարան	Պ. Վ. Պապաջանեանց	Պ. Պ. Զարգարեան և Պալասանեան
7	Ընդհանուր պատմութիւն	Ջ. Դասարան	Պ. Մ. Մանդինեանց	Պ. Պ. Պապաջան. և Տ. Բարգուշ.
8	Կրօն	Ջ. և Գ. Դասարաններ	Հ. Արխատակէս վարդապետ	Հ. Հարք Յուսիկ և Ղևոնդ վարդապետք
9	Բարոյական փիլիսոփայութիւն	Գ. Լսարան	Պ. Վ. Պապաջանեանց	Պ. Պ. Զարգարեան և Մանդինեան
10	Հայոց լեզու	Գ. Դասարան	Հ. Յուսիկ վարդապետ	Պ. Պալեան
11	Մաթեմատիկա	Ջ. Դասարան	Պ. Կ. Տէր Մկրտչեան	Պ. Պ. Զարգարեան և Մանդինեանց
13	Ռուսաց լեզու	Գ. Դասարան	Պ. Յ. Ղօրղանեանց	Պ. Պ. Մանդինեան և Խանաղեան
6	Ֆրանսերէն	Գ. Լսարան	Պ. Ս. Պալասանեան	Պ. Պ. Պապաջանեան և Զարգարեան
11	Հայոց լեզու և Մատենագրութիւն	Ջ. Դասարան	Պ. Մ. Պալեան	Հ. Յուսիկ վարդապետ և Պ. Պալասանեան
17	Բնագիտութիւն	Ջ. Դասարան	Պ. Մ. Զարգարեան	Պ. Պ. Տէր Մկրտչեան և Խանաղեան

	Ընդհանուր պատմութիւն	Գ. Դասարան	Պ. Գ. Տէր Բարդուղիմէոսեան	Պ. Պ. Մանդինեան և Մելեան
20	Հայոց պատմութիւն	Զ. Դասարան	Պ. Ս. Պալասանեան	Հ. Ցուսիկ վարդապետ և Պ. Պալեան
21	Ռուսաստանի աշխարհ. և Բնական պատմութիւն	Գ. Դասարան	Պ. Ա. Յարութիւնեան	Պ. Պ. Պապաջանեան, Տ. Մկրտչեան, Խանազեան և Պ. Մանդինեան
22	Հայոց լեզու	Գ. Լսարան	Պ. Մ. Պալեան	Հ. Ցուսիկ վարդապետ և Պ. Պալասանեան
23	Ռուսաց լեզու	Զ. Դասարան	Պ. Յ. Ղօրղանեան	Պ. Պ. Մանդինեան և Զարգարեան
24	Ընդհ. աշխարհագրութիւն	Գ. Դասարան	Պ. Գ. Տէր Բարդուղ.	Պ. Պ. Մանդինեան և Մելեան
27	Ֆրանսերէն	Զ. Դասարան	Պ. Ս. Պալասանեան	Պ. Պ. Պապաջանեան և Զարգարեան
28	Մաթեմատիկա	Գ. Դասարան	Պ. Կ. Տէր Մկրտչեան	Պ. Պ. Զարգարեան և Մելեան
29	Տիեզերագրութիւն և Առողջապահութիւն	Զ. Դասարան	Պ. Մ. Զարգարեան	Պ. Պ. Տէր Մկրտչեան և Տէր Բարդուղիմէոսեան
31	Ձայնագրութիւն	Գ. Դասարան	Հ. Սահակ Սարկաւագ	Հ. Ղևոնդ վարդապետ և Պ. Տէր Մկրտչեան
Յունիս				
1	Ռուսաց պատմութիւն	Զ. Դասարան	Պ. Մ. Մանդինեան	Պ. Պ. Ղօրղանեան և Յարութիւնեան

ՏԵՍՈՒՉ ՀԵՄԱՐԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՆՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆՑ·

ՏԵՍՈՒՉ ՀԵՄԱՐԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՆՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆՑ·